

Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՄ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1905—1911 ԹԹ.

Գերմանիայի անցումը կապիտալիզմի զարգացման բարձրագույն՝ մոնոպոլիստական, փուլին նշանավորվեց արտաքին քաղաքական բնագավառում եռանդուն փորձերով՝ կարճ ժամանակամիջոցի ընթացքում ստեղծել սեփական գաղութային կայսրություն կամ ծայրահեղ դեպքում շահերի լայնածավալ շրջաններ, դուրս մղելով այն երկրներին, որոնք հասցրել էին իրենից վաղ ռետեղ գրավել արևել տակա։ Գերմանիայի հզոր մոնոպոլիստական միավորումները պահանջում էին կապիտալի ներդրման նորանոր ոլորտներ, արտահանման շուկաներ և հումքի աղբյուրներ։ Գերմանական մարտնչող միլիտարիզմի առավել ունակցիոն խմբավորումը՝ պանգերմանիստները, երազում էին իրականացնել մի կոնֆեդերացիա, որն ընդգրկեր Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Բալկանյան պետությունները և Թուրքիան, որի սահմանները տարածվեին Հյուսիսային ծովից մինչև Պարսից ծոց¹։ Սակայն, քանի որ Մերձավոր և Միջին արևելքում չափազանց ուժեղ էին մյուս իմպերիալիստական պետությունների, մասնավորապես Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դիրքերը, գերմանական իմպերիալիզմի գաղութային ներխուժումն այս շրջանները հնարավոր էր իրականացնել միայն երկարատև և բազմակողմանի «պաշարումից» հետո։ Բաղդադի երկաթուղին, ահա այն լծակը, որի օգնությամբ իրականացվելու էր գերմանական տնտեսական ներթափանցումը անատոլիական Թուրքիա, Միջագետք, իսկ ապա նաև Իրան, Պարսից ծոցի ափերը, Արաբական թերակղզի, Հնդկական օվկիանոսի ավազանը։ Բաղդադի երկաթուղու շինարարության հետ զուգահեռ գերմանական մոնոպոլիաները, քաղաքական գործակալությունը, դիվանագիտությունը և զինվորականությունը ձեռնամուխ եղան նշված շրջաններում գերմանական ազդեցության մեծացման գործին, որպեսզի իմպերիալիստական այդ երկաթյա զարկերակի շինարարության ավար-

¹ Роланд Эшер, Пангерманизм, Птг., 1916, стр. 11.

տի պահին գաղութային կամ կիսագաղութային տիպի գերմանական պրոտեկտորատների ստեղծման համար բարենպաստ քաղաքական մըթնոլորտ նախապատրաստեն թուրքիայում, իրանում և դրանց հարակից երկրներում:

Միջին արևելքում գերմանական «համաշխարհային քաղաքականություն» (Weltpolitik) ստրատեգիաների ուշադրության կիզակետում էր գտնվում իրանը, որի գործնական յուրացումը նախատեսվում էր ձեռնարկել Բաղդադի երկաթուղու շինարարության ավարտից հետո: Անդրադառնալով այդ հարցին Վ. Ի. Լենինը նշում է, որ Բաղդադի երկաթուղու հարցը... դառնում է պարսկական հարց»²: Հետևաբար, իմպերիալիզմի դարաշրջանում «իրանական հարցի» քննարկումը անհրաժեշտ է վերցնել Բաղդադի երկաթուղու պրոբլեմի հետ սերտ կապակցությամբ, որը և բանալի կհանդիսանա Մերձավոր և Միջին արևելքում իմպերիալիստական հակասությունների այն հանգուցակետերի բացահայտման համար, որոնք չափազանց մեծ դեր խաղացին առաջին համաշխարհային պատերազմի բռնկման գործում:

Ինչպես հայտնի է, իրանական հարցը ռուսական իմպերիալիզմի համար հանդիսանում էր տնտեսական և քաղաքական առաջնակարգ կարևորություն ունեցող հարց: Այդ պատճառով XX դ. սկզբին գերմանական իմպերիալիզմի դրսևորած ակտիվությունը իրանում և, հատկապես, Բաղդադի երկաթուղու նախագծի հայտնվելը ցարիզմի համար ստեղծում էր ռազմաստրատեգիական և տնտեսական-քաղաքական բնույթի մեծագույն սպառնալիք³: Գերմանիայի փորձերը՝ թափանցելու իրանի հարավային շրջանները և հատկապես Պարսից ծոցի ավազանը, աննախընթաց կերպով սրելու էին նաև անգլո-գերմանական հարաբերությունները: Այսպիսով, Բաղդադի երկաթուղին հանգեցնելու էր ողջ արևելյան հարցի ճգնաժամին, և այդ ճգնաժամը չէր լուծվելու, մինչև որ կրկին անգամ չվերածվեր Եվրոպայի և Ասիայի քարտեզը:

Գերմանիայի հետևողական ներթափանցումը իրան և թուրքիա բնականաբար չէր կարող առաջ չբերել պետությունների վերախմբավորում: Ընդհանուր թշնամու առկայության պայմաններում Արևելքում ռուս-անգլիական մրցակցությունը օբյեկտիվորեն այլևս չէր կարող շարունակվել և պետք է փոխարինվեր, թեկուզև, ժամանակավոր բնույթի

² В. И. Ленин, Тетради по империализму, поли. собр. соч., т. 28, стр. 709.

³ Martin Bradford Gary, German—Persian diplomatic relations 1873—1912, S-Gravenhage, Mouton, 1959, p. 59. Տե՛ս նաև՝ М. Феодоров, Соперничество торговых интересов на Востоке, СПб., 1903, стр. 175—176.

⁴ Чарльз Кароли, Англо-германская проблема, М., 1915, стр. 158.

համաձայնությամբ⁵։ Իսկապես, 1905 թ. վերջերին Անգլիայի և Ռուսաստանի մերձավոր և միջինարևելյան քաղաքականության մեջ նկատվեց շրջադարձ։ Այս երկու պետությունների կառավարող շրջանները սկսեցին դրսևորել փոխադարձ համաձայնությամբ իրանը, Աֆղանստանը և Տիրեթը միմյանց միջև «ազդեցության դոտինների» բաժանելու միտում։ Գերմանական վտանգը և իրանական ժողովուրդների աղգային-ազատադրական շարժման բուռն վերելքը արագացնում էին այդ գործարքի կնքումը։ Թեև ռուս-ճապոնական պատերազմը միառժամանակ հետաձգեց այդ գործը, սակայն եվրոպական քաղաքական շրջաններում համոզված էին, որ վաղ թե ուշ գերմանական վտանգը համաձայնության եզրեր կստեղծի Ռուսաստանի և Անգլիայի՝ այս երկու վաղեմի մրցակիցների միջև։

Կայդերական Գերմանիայի համար ռուս-ճապոնական պատերազմը՝ ցարիզմի հեռավորարևելյան այդ ավանտյուրան, վերին աստիճանի ձեռնտու էր, որովհետև հետաձգում էր ռուս-անգլիական համաձայնագրի կնքումը և, բացի այդ, նվրոպայում Գերմանիային մեն-մենակ էր թողնում Ֆրանսիայի հետ։ Մի կարճատև շրջանում Բեռլինում նույնիսկ հույսեր հայտնվեցին Ռուսաստանը Ֆրանսիայից պոկելու ուղղությամբ։

Այդպիսի փորձ ձեռնարկվեց, օրինակ, 1905 թ. հուլիսին Բյուրկում՝ Նիկոլայ II-ի և Վիլհելմ II-ի հանդիպման ժամանակ, որը, սակայն, ավարտվեց անհաջողությամբ, որովհետև Ռուսաստանն արդեն ամուր կապերով (այդ թվում նաև ֆինանսական) կապված էր ֆրանսիական իմպերիալիզմի հետ։ Այնուհանդերձ, Գերմանիայի և Ռուսաստանի հարաբերությունները, ընդհուպ մինչև պատերազմի ավարտը, շարունակում էին կրել «խիտիմ» բնույթ, որն առիթ տվեց երկու երկրների աջ մամուլին գրել, նույնիսկ, երկու միապետությունների միջև նախկին բարեկամության վերածնման մասին։

Ռուս-ճապոնական պատերազմի տարիներին գերմանական միլիտարիզմը օգտագործեց ցարական Ռուսաստանի արտաքին քաղաքականության ակտիվության թուլացումը Բալկաններում, իրանում և Փոքր Ասիայում՝ էքսպանսիայի ուժեղացման և Ռուսաստանին իր զրաված դիրքերից դուրս մղելու համար։ Ինչպես հայտնի է, 1904 թ. Ռուսաստանի և Գերմանիայի միջև ստորագրվեց նոր առևտրական պայմանագիր։ Բանակցությունների ժամանակ ռալխսկանցներ Բերնհարդ ֆոն Բյուկովը Վիտտեի հետ զրույցի ընթացքում տրտնջում էր, որ Ռուսաստանը բա-

⁵ В. Гурко-Кряжин, Краткая история Персии, М., 1925, стр. 36—37.

վարար չափով թույլ չի տալիս գերմանական ապրանքների ազատ վաճառահանումը իրանում և մասնավորապես մատնանշել էր տրանզիտի արգելքը դեպի Բաթում, ինչպես նաև այն բոլոր միջոցառումները, որոնք ձեռնարկված էին Ռուսաստանի կողմից իրանի հյուսիսային մասում օտարերկրյա մրցակցության դեմ պայքարելու համար: Թեև այս թեման բանակցությունների ժամանակ հետագա զարգացում չստացավ և չարտացոլվեց եզրափակիչ պայմանագրում, սակայն այդ փաստն ինքնըստինքյան նախազգուշացում հանդիսացավ Պետերբուրգի համար: Վիտտեի արտահայտությամբ պարզվեց, որ Գերմանիան ոչ միայն հավակնություններ ունի իրանի նկատմամբ, այլև կշռադատում է կոնկրետ պլաններ հյուսիսային իրանում ռուսական ֆարերկանտների «արգելանոցը» ներխուժելու համար: Իսկապես, ռուսական դիվանագիտական ներկայացուցիչները տագնապալից լուրեր էին ուղարկում Պետերբուրգ, որ գերմանական արդյունաբերական շրջաններն ուժգին կերպով ուսումնասիրում են իրանական շուկան, որ գերմանական ներքին գործերի մինիստրությունում կազմակերպվել է հատուկ բյուրո, որը առևտրաարդյունաբերական շրջաններին նյութեր է մատակարարում իրանական շուկայի վիճակի մասին, միաժամանակ զբաղվելով կոնկրետ հանձնարարականների (Fingerzeigen) կազմումով:

Գերմանիան աշխատում էր օգտվել նաև իրանական հարցի ընդհանուր սրումից: 1905 թ. մայիսի սկզբին Թուրքիայում ռուսական դեսպան Զինովկին հաջողվեց ձեռք բերել Բեռլինում թուրքական դեսպանի 1905 թ. ապրիլի 26-ի գաղտնի հեռագրի պատճենը, որտեղ շարադրվում էր այն զրույցի բովանդակությունը, որ դեսպանը ունեցել էր գերմանական արտաքին գործերի մինիստրության պետական քարտուղար ֆոն Ռիխտհոֆենի հետ: Վերջինս թուրքական կառավարության ուշադրությունը հրավիրում էր Ռուսաստանի կողմից իրանում կառուցվող Ղազվին—Համաղան խճուղային ճանապարհի վրա: Ընդ որում հատուկ շեշտվում էր, որ այդ ճանապարհը Ռուսաստանի համար նշանակալիորեն կհեշտացնի գործերի տեղաշարժը և կունենա ռազմաստրատեգիական նշանակություն⁶: Այս տեղեկությունները հաղորդելով, Զինովկը նշում էր, որ իր համար միանգամայն անհասկանալի է Թուրքիայում Բեռլինի

⁶ С. Ю. Витте, Воспоминания, т. 3, М., 1960, стр. 465.

⁷ Центральный Государственный исторический архив Ленинграда. ф. 560, оп. 28, д. 359, л. 182 (այսուհետև՝ ЦГИАЛ).

⁸ Архив внешней политики России, ф. Персидский стол, д. 895. л. 34—35 (այսուհետև՝ АВІР).

հակառուսական անվանարկության իմաստը, առավել ևս, որ մինչև այժմ թիրեն ոչ մի անգամ առիթ չի եղել լսելու, որ գերմանական կառավարությունը մեզ համար անբարենպաստ ներշնչումներ աներ թուրքերին: Ես առավել ևս,—շարունակում էր դեսպանը,—դժվարանում եմ ինձ համար պարզել այն պատճառները, որոնք հարկադրել են բարոն Ռիխտհոֆենին թուրքական կառավարության մեջ կասկածներ առաջացնել: Պարսկաստանում մեր առևտրական ձեռնարկությունների դեմ: Ինձ համար անհասկանալի է, դրանից ի՞նչ օգուտ կարող էր քաղել Գերմանիան⁹:

Ցարական կառավարության համար գերմանական «ստրատեգիական» հուշումների իմաստը պարզվեց քիչ ավելի ուշ, 1905 թ. վերջին, երբ Բեռլինը քողարկված ձևով սկսեց աջակցություն ցույց տալ թուրքական ագրեսիային արևմտյան Իրանում, դրա մեջ առաջին հերթին տեսնելով ազդու միջոց Իրանում Ռուսաստանի դիրքերը թուլացնելու համար:

Գերմանական յունկերա-բուրժուական շրջանները անհանգստանում էին, որ Ռուսաստանի հեռավորարևելյան քաղաքականության սնանկությունը կարող է վերջ դնել «ազատ ձեռքերի» գերմանական քաղաքականությանը, որը հիմնված էր անգլո-ռուսական հակասությունների վրա: Ցարիզմի պարտությունը Հեռավոր արևելքում անխուսափելի էր դարձնում Ռուսաստանի արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնի փոխադրումը դեպի Նվրոպա և Մերձավոր ու Միջին արևելք, որը չէր կարող չհանգեցնել ռուս-գերմանական իմպերիալիստական հակասությունների սրմանը: Իսկապես, ռուս-ճապոնական պատերազմի ավարտը և 1906 թ. Բաղդադի երկաթուղու ֆինանսավորումը գերմանական բանկային միավորումների կողմից, անմիջապես իրենց անդրադարձումներն ունեցան միջազգային հարաբերությունների բնագավառում և է՛լ ավելի սրեցին անգլո-գերմանական և ռուս-գերմանական հակասությունները, ինչպես նաև ավելի ընդգծեցին Անգլիայի և Ռուսաստանի գործողությունների ընդհանրությունը այն բոլոր հարցերում, որոնց այս կամ այն չափով առնչվում էր Գերմանիան¹⁰:

Արդեն 1906 թ. մայիսին գերմանական կառավարող շրջանները ենթադրում էին, որ անգլո-ռուսական համաձայնագրի կնքումը միայն օրերի հարց է: Այդ ենթադրությունը համարյա դարձավ համոզմունք,

⁹ Նույն տեղում:

¹⁰ J. B. Wolf, The Diplomatic history of the Bagdad Railway, Columbia, 1936, p. 46—48.

երբ Լոնդոնի «Սթանդարթ» թերթը հրապարակեց մի հոդված, որտեղ նշվում էր, որ անգլո-ռուսական համաձայնագիրը, բացի Ասիային վերաբերող հարցերից, պարունակելու է հատուկ կետ Բաղդադի երկաթուղու վերաբերյալ¹¹։ Դա ստիպեց Բեռլինի կաբինետին անմիջապես դիմել Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ա. Պ. Իզվոլսկուն, որտեղ նա «հույս էր հայտնում», որ «կայսերական կառավարությունը առանց Բեռլինի կաբինետի մասնակցության ոչ մի որոշում չի ընդունի գերմանական շահերը շոշափող հարցերի վերաբերյալ և չի ստիպի Գերմանիային կանգնելու կատարված փաստի առջև»¹²։ Իզվոլսկին պատասխանեց, որ իր կառավարությունը հաշվի է նստում Գերմանիայի շահերի հետ և խոստացավ որևէ որոշում կայացնելու դեպքում նախապես այդ մասին հաղորդել Բեռլինի կաբինետին¹³։

Հատկանշական է, որ Գերմանիայի հետ համատեղ անգլո-ռուսական համաձայնագրի կնքմանը աշխատում էր արգելք հանդիսանալ նաև օսմանյան Թուրքիան, որը շահագրգռված էր, որպեսզի իմպերիալիստական պետությունների միջև շարունակվեն պահպանվել երկպառակությունները։ Բացի այդ, Ստամբուլը գիտակցում էր, որ անգլո-ռուսական համաձայնագրի կնքումը իր առջև անհաղթահարելի պատենշ կրստեղծի Իրանում Թուրքիայի զավթողական քաղաքականության առջև։ Հենց այդ նպատակով նա օտարերկյա դեսպաններից յուրաքանչյուրին առատորեն կեղծ ինֆորմացիա էր մատակարարում մյուս պետությունների քաղաքականության մասին։ Այդ ինֆորմացիան սովորաբար ընկնում էր դեսպանների ձեռքը որպես արտասահմանում Թուրքական ներկայացուցիչների դիվանագիտական գրագրության պատճեն՝ Թուրքական արտգործմինիստրության հետ, որը իբր ձեռք է բերված «գաղտնի աղբյուրից»¹⁴։

1905 թ. մարտկույական ճգնաժամից հետո Եվրոպայում ստեղծված քաղաքական հարաբերական հանգիստ վիճակը բարենպաստ պայմաններ ստեղծեց Մերձավոր և Միջին արևելքում Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքականության ակտիվացման համար։ Պատահական չէ, որ հենց

¹¹ Paul Butterfield, The diplomacy of the Bagdad Railway 1890—1914, Göttingen, 1932, p. 31.

¹² АВГР, ф. Посольство в Берлине, оп. 509 в. д. 21 г., л. 1. Տե՛ս նաև՝ „Die grosse Politik der Europaischen Kabinette, 1871—1914“, Bd. XXV, t. 1, № 8507, այսուհետև՝ GP).

¹³ Paul Butterfield, նշվ. աշխ., էջ 31.

¹⁴ Տե՛ս W. M. Carlgren, „Informationsstycken“ från Abdul Hamids senare regeringsar. „Historisk Tidskrift“, 1952, H. 1, Stockholm, 1952, S. 1—35.

այդ օրերին Պետերբուրգում իրազեկ դարձան, որ բրիտանական արտաքին գործերի մինիստր էդուարդ Դրեյք հայտարարել է Լոնդոնում Ֆրանսիական դեսպան Պ. Կամբոնին, որ «ժամանակն է ձեռնարկել Բաղդադի երկաթուղու շինարարությանը»։ Դրեյքի կարծիքով, փոխանակ այդ ձեռնարկումը ամբողջապես Գերմանիայի ձեռքերում թողնելու, անհրաժեշտ է «բաժանել նրա հետ բոլոր օգուտները», առավել ևս, որ միևնույն է վաղ թե ուշ այդ ճանապարհը կկառուցվի։ Միակ պետությունը, որը կարող է արգելակել դրան,—նկատում է Դրեյքը,—Ռուսաստանն է։ Նա, իհարկե, չէր ցանկանա ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք վնաս հասցնեին նրա շահերին կամ տհաճություններ պատճառեին ռուսական կառավարությանը։ Սակայն ինձ թվում է, որ մենք կարող ենք այդ գործում մասնակցություն ցուցաբերելու համար առաջարկել այնպիսի պայմաններ, որոնք միանգամայն բավարարեն Ռուսաստանի բոլոր հնարավոր պահանջները»¹⁵։

Բրիտանական մինիստրի այսպիսի հոգատարությունը Ռուսաստանի շահերի նկատմամբ, անշուշտ, բացատրվում էր նրանով, որ շուտով Պետերբուրգում սկսվելու էին բանակցություններ անգլո-ռուսական համաձայնագրի կոնկրետ պայմանների վերաբերյալ և Անգլիան, բնականաբար, շահագրգռված էր իր ապագա դաշնակցի բարյացակամ վերաբերմունքով։ Բաղդադի երկաթուղու նկատմամբ բրիտանական կառավարության քաղաքականության կտրուկ շրջադարձն ստիպեց Պետերբուրգին վերանայել Ռուսաստանի դիրքորոշումը հիշյալ հարցի նկատմամբ, որովհետև մինչ այդ նա վարել էր այդ երկաթուղու շինարարությունը կասեցնելու քաղաքականություն։ Ռուսաստանի առևտրա-արդյունաբերական շրջանները գտնում էին, որ Իրանում ռուսական առևտրի պաշտպանության լավագույն ձևը «ճանապարհազրկության տարերային մենաշնորհն է»¹⁶։

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ Բաղդադի երկաթուղու նկատմամբ անգլո-ռուս-ֆրանսիական ճակատը արդեն ճեղքվածք էր սկսվել¹⁷։ էդուարդ Դրեյքի առաջարկությունը Պետերբուրգին դրեց դժվարին

¹⁵ АВПР, Ф. Политархив, д. 3627, л. 2. Տե՛ս նաև՝ «Documents diplomatiques français, 1871—1914», 2-me série, vol. IX/II, № 625 (համբոնի 1905 թ. մարտի 26-ի (ապրիլի 7-ի) նամակը Բուրժուային), այսուհետև՝ DDF:

¹⁶ Л. А. Собоцинский, Персия. Статистико-экономический очерк, СПб., 1913, стр. 70.

¹⁷ Այդ մասին տե՛ս Զինովի 1906 թ. մայիսի 25-ի (հունիսի 7-ի) հեռագիրը, АВПР, ф. Политархив, д. 3627, л. 17—18.

երկրնտրանքի առջև: Բաղդադի երկաթուղու շինարարութեանը դիմադրելու քաղաքականութիւնը այն դեպքում, երբ Անգլիան և Ֆրանսիան հրաժարվում են այդ քաղաքականութիւնից, ոչ մի հաշտութիւն չէր խոստանում, իսկ մասնակցութիւնը ևս ոչ մի օգուտ չէր կարող բերել Ռուսաստանին, որովհետև նրա ֆինանսական աղքատութիւնը հնարավորութիւն չէր տալիս գործնականորեն մասնակցելու այդ ձեռնարկութեանը:

«Աթանդարթ» թերթի հոգւածի առթիւ Բեռլինի առաջ քաշած պահանջը այն մասին, որ առանց Գերմանիայի մասնակցութեան Ռուսաստանը «ոչ մի որոշում չպետք է ընդունի այնպիսի հարցերի վերաբերյալ, որոնք շոշափում են գերմանական շահերը», հուշեց Իզվոլսկուն, որ անհրաժեշտ է Բաղդադի երկաթուղու վերաբերյալ անմիջական համաձայնութեան մեջ մտնել Գերմանիայի հետ: Ռուսական դիվանագիտական շրջաններում այդ ուղղությամբ, արդեն, նախապատրաստված էին որոշակի տրամադրութիւններ: Յարիզմը ուղիներ էր որոնում Իրանում և Թուրքիայի հյուսիսում երկաթուղային շինարարութիւնը կրկին ինչ-որ ժամկետով հետաձգելու համար, որովհետև այդ երկրների կառավարութիւնների հետ կնքած երկաթուղային շինարարութեան արգելքի մասին համաձայնագրերի ժամկետը մոտենում էր իր ավարտին: Հետևաբար, Գերմանիայի հետ համաձայնագիր կնքելու միջոցով կարելի էր ևս մեկ անգամ փորձել ապահովել ռուսական իմպերիալիզմի շահերը հիշյալ շրջաններում: «Այդ ուղղությամբ մտքերի անկեղծ փոխանակութեան ճանապարհով,—գրում է Իզվոլսկին Լոնդոնում ռուսական դեսպան Բենկենդորֆին 1906 թ. մայիսի 11/24-ին,—մենք հույս ունենք ապահովել այդ շահերը, տվյալ դեպքում ղեկավարվելով Անգլիայի գործելակերպով, որի կողմից արդեն փորձեր են արված համաձայնութեան գալ Գերմանիայի հետ Բաղդադի երկաթուղու հարցում՝ համապատասխան օգուտներ ձեռք բերելու նպատակով»¹⁴:

Իզվոլսկու մտահղացման իրականացումը հեշտանում էր նրանով, որ Բեռլինի հայտարարութեան մեջ ասվում էր, որ գերմանական կառավարութիւնը «պատրաստ է հաճուքով ողջունել ասիական գործերի վերաբերյալ Ռուսաստանի և Անգլիայի միջև կնքվող ամեն մի համաձայնագրի, եթե այն կվերաբերի բացառապէս Ռուսաստանի և Անգլիայի շահերին»¹⁵:

¹⁴ АВГР, ф. Посольство в Берлине, оп. 509 в, д. 21 г., л. 3.

¹⁵ Նույն տեղում, թ. 1:

Ցարական արտաքին քաղաքականության ղեկավարի կարծիքով այդ հայտարարությունը «ճանապարհ էր բացում» լոնդոնի հետ բանակցությունների համար և ազատում էր Պետերբուրգի ձեռքերը²⁰։

Ելնելով վերոհիշյալ նկատառումներից, 1906 թ. մայիսի 11-ին (24-ին) Իզվոլսկին Պետերբուրգում գերմանական դեսպան Ֆոն Շյունին հանձնեց մի հուշագիր, որտեղ նշվում էր, որ «կայսերական կառավարությունն առանձնահատուկ հաճույքով համոզվեց», որ Բեռլինի կարինետը «պատրաստ է ողջունելու անգլո-ռուսական համաձայնագիրը»։ Այնուհետև ասվում էր, որ Պետերբուրգը Բաղդադի երկաթուղու վերաբերյալ չի ընդունի ոչ մի որոշում, «առանց նախապես անկեղծ բացատրությունների մեջ մտնելու Բեռլինի կարինետի հետ, հաստատ համոզված լինելով, որ վերջինս, ղեկավարվելով նույն զգացումներով, իր կողմից չի մերժի հաշվի առնել Ռուսաստանի շահերը»²¹։

Այսպիսով, ցարական դիվանագիտության առջև կանգնած էր վերին. աստիճանի բարդ խնդիր՝ Անգլիային մերձենալու հետ միաժամանակ լավ հարաբերություններ պահպանել Գերմանիայի հետ։ Մանավանդ որ հիշողության մեջ դեռևս թարմ էին մարոկկոյական ճգնաժամի իրադարձությունները, որն առաջ էր եկել Անգլիայի և Ֆրանսիայի միջև նույնպիսի մերձեցման հետևանքով։ Այն դրությունը, որի մեջ ցարիզմը գտնվում էր 1906 թ., թույլ չէր տալիս ուսկի դիմել, կրկնելով Ռուսաստանի և Գերմանիայի միջև հարաբերությունների նման իրադրությունը։ Այդ պատճառով զարմանալի չէ ցարական կառավարության այն հատուկ ուշադրությունը Բեռլինի նկատմամբ, որն աչքի է ընկնում 1906—1907 թթ. ռուս-գերմանական հարաբերությունների ընթացքում։ Այդ տարիներին ռուսական դիվանագիտության կարևորագույն խնդիրն էր թույլ չտալ իրեն ընդգրկելու անգլո-գերմանական պայքարի մեջ։ Քաղաքական այդ գիծը իրագործելու միակ հնարավորությունը անգլո-ֆրանսիական և գերմանո-ավստրիական բլոկների միջև խուսանավելն էր։

Դեռևս 1906 թ. մայիսին Պետերբուրգում հակված էին կարծելու, որ Իրանում գերմանացիների գործունեության վերաբերյալ լուրերը չափազանցված են և քանի որ այդ լուրերի մի մասը գալիս էր լոնդոնից, ենթադրում էին, որ «լոնդոնի կարբինետը միտումնավոր կերպով թանձրացնում է գոյները, բնականաբար ձգտելով այդ ճանապարհով մեղ-

²⁰ Նույն տեղում, Թ. 3։

²¹ Տե՛ս DDF, vol. X, № 70 (Բուժպարի 1906 թ. մայիսի 11/24-ի նամակը. Բուժուսային)։ „British documents on the origins of the war 1898—1914“, vol. IV, № 218 (այսուհետև՝ BD)։

հակել պարսկական գործերի վերաբերյալ հնարավորին չափ շուտ համաձայնություն գալու իր հետ, ընդ որում իր համար առավել ձեռնտու պայմաններով»²²։

Իր հերթին մինչև 1906 թ. գարունը Թեհրանում գերմանական միսիան, որը ղեկավարում էր «ռուսոֆիլ» կոմս Ռեքսը, վարում էր միանգամայն զգույշ քաղաքականություն, վախենալով, որ կտրուկ քաղաքականությունը կարող է նպաստել Անգլիայի և Ռուսաստանի մերձեցմանը։ Ճիշտ է, Թեհրանում ֆրանսիական դեսպանությունը հավատացնում էր ռուսական կոլեգաներին, որ Ռեքսը խորամանկ է և կարողանում է «փայլուն կերպով վաբել խաղը»²³, սակայն այդ նախազգուշացումները ռուսական դեսպանի կողմից ընդունվում էին որպես ռուս-գերմանական հարաբերությունները սրելու փորձ։ 1906 թ. մարտին Ռեքսը ետ կանչվեց և նրա փոխարեն նշանակվեց ֆոն Շտեմբիլը, որը մինչ այդ հանդիսանում էր Ստամբուլում գերմանական գլխավոր հյուպատոսը։ Արդեն այդ նշանակումը վկայում էր այն մասին, որ Գերմանիան մտադիր է անգլո-ռուսական մերձեցմանը պատասխանել իրանում ակտիվ քաղաքականությամբ։ Իսկապես, 1906 թ. օգոստոսին Պետերբուրգում տեղեկություն ստացվեց գերմանական «Համբուրգ-Ամերիկա» միջազգային մոնոպոլիայի կողմից դեպի Պարսից ծոց կանոնավոր ծովային գիծ բաց անելու մասին, իսկ սեպտեմբերին գերմանական գործերի հավատարմատար Միկելը հաստատեց թերթերում հայտնված լուրերը Թեհրանում գերմանական «Դոյչե Օրիենտբանկ»-ի բաժանմունքը բացելու վերաբերյալ գերմանո-իրանական կոնվենցիայի ստորագրման մասին²⁴։ Ճիշտ է, Միկելը հայտարարեց, որ բանկը կազմակերպվում է «զուտ առևտրական նպատակներով, և Գերմանիան իրանում քաղաքական նպատակներ չի փնտրում»²⁵, սակայն դժվար թե դա հանգստացներ Իզվոլսկուն, քանի որ Բաղդադի ճանապարհը ևս, Բյուլովի պնդման համաձայն, նույնպես ձեռնարկված էր զուտ առևտրական նպատակներով։

Այսպիսով, 1906 թ. աշնանն արդեն բավականաչափ նյութ էր կուտակվել Բեռլինի հետ խոսակցություն սկսելու համար։ Սեպտեմբերի

²² АВІР, ф. Посольство в Берлине, оп. 509 в, д. 21 г., л. 3: GP, Bd. XXV, t. 1, № 8568.

²³ DDF, 2-série, vol. X, № 42, p. 181.

²⁴ АВІР, ф. Персидский стол, д. 4453, л. 123.

²⁵ GP, Bd. XXV, t. 2, s. 103—121.

28-ին իզվոլսկին մեկնեց արտասահման, և հայտարարվեց, որ նա ուղևորվում է հանգստի և այցելելու իր ընտանիքին, որն ապրում էր Տեգերնզեյի շրջանում (Գերմանիա)։ Մինչդեռ իրականում իզվոլսկու նշապատակն էր բանակցություններ վարել Բեռլինի և Փարիզի հետ։

Սկզբում Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը ժամանեց Ֆրանսիայի մայրաքաղաքը։ Այստեղ նրա նպատակն էր հավաստիացնել ֆրանսիացիներին, որ Ռուսաստանը հավատարիմ է ֆրանս-ռուսական դաշինքին և Փարիզի կարիները նախապատրաստել Բեռլինում ծրագրված բանակցություններին։

Ֆրանսիայում իզվոլսկու պլաններին վերաբերվում էին վերին աստիճանի կասկածանքով։ Առանձնապես անհանգստացնում էր այն փաստը, որ այդ ուղևորության մեջ չէր ընդգրկված Լոնդոնը։ Անգլիացիները փորձեցին «ուղղել» ռուսական մինիստրի այդ անփութությունը, ոչ պաշտոնապես հաղորդելով նրան էդուարդ VII-ի և անգլիական կառավարության ցանկությունը՝ Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքում տեսնելու նրան։ Սակայն մինիստրը հարգալից կերպով մերժեց այդ հրավերը, պատճառաբանելով, որ պրեզիդենտ Ֆալյերը իր պատվին արդեն նշանակել է ընդունելություն և, բացի այդ, կառավարական ճգնաժամը ստիպում է նրան միառժամանակ մնալ Փարիզում²⁶։ Մերժման իսկական պատճառը նա անկեղծորեն բացատրեց Ֆրանսիայում անգլիական դեսպան Բերթինին։ Ուղևորությունը Լոնդոն, նշեց մինիստրը, տեղիք կտար լուրերի, որ ռուս-անգլիական բանակցություններն արդեն ավարտվելու մոտ են, մինչդեռ իրականում այդպես չէ։ Բացի այդ, մինչև Անգլիայի հետ համաձայնագրի կնքումը, ինքը Բեռլինում պետք է պարզի, թե Գերմանիայի շահերը որքանով են առնչվում այդ գործին։ իզվոլսկին շտապեց ավելացնել դրան, որ իր նպատակն է խուսափել Գերմանիայի այնպիսի վարքագծից, որպիսին նա դրսևորեց մարոկկոյական հարցում։ Նա իր համար պետք է պարզի, թե Բեռլինում ինչ են հասկանում այսպես կոչված «առևտրական շահեր» ասելով։ Զե՞ որ Գերմանիան հայտարարում էր, որ ինքը Մարոկկոյում ունի միայն առևտրական շահեր, բայց իրականում ֆրանս-գերմանական հարաբերություններում ծնունդ առավ մեծ լարվածություն։ Ինքը չի կարող իր վրա վերցնել Ռուսաստանի և նրա մերձավոր հարևանի միջև նմանօրինակ իրադրություն ստեղծելու ռիսկը²⁷։

²⁶ Ֆե'ս A. P. Istvolsky, Au service de la Russie. Correspondance diplomatique 1906—1911, Paris, 1937—1939, vol. I, p. 379—385.

²⁷ Ֆե'ս Բերտինի 1906 թ. հոկտեմբերի 9/22-ի երկու հաղորդագրությունները Գրեյին, BD, vol. IV, № № 230, 231:

Իզվոլսկին, Պիշոնի հետ զրույցի ժամանակ, մոտավորապես նույն կերպ պատճառաբանեց Բեռլին այցելելու անհրաժեշտությունը: Նա հայտարարեց, որ իր արտաքին քաղաքականությունը բոլոր պետությունների նկատմամբ կրելու է հաշտվողական բնույթ, և շեշտեց, հատկապես, Գերմանիայի հետ լավ հարաբերությունների պահպանելու անհրաժեշտությունը²⁸:

1906 թ. հոկտեմբերի 15/28-ին Իզվոլսկին ժամանեց Բեռլին: Այստեղ նա մնաց երկու օր և հանդիպումներ ունեցավ Վիլհելմ II-ի, ֆոն Բյուլովի և գերմանական արտաքին գործերի մինիստրության պետական քարտուղարի տեղակալ Մյուլլերի հետ: Մինիստրը սկսեց Բաղդադի ճանապարհից և իրանական գործերից: Հաղորդելով, որ Բաղդադի երկաթուղու նկատմամբ ռուսական հասարակական կարծիքի մեջ գոյություն ունի օպոզիցիա, նա նշեց, որ իր համար հեշտ կլինեի հաղթահարել այդ տարաձայնությունները, եթե հնարավոր լինեի ցրելու այն երկյուղը, որ Բաղդադի ճանապարհը մտադիր չէ իր ցանցը տարածել իրանում: Այնուհետև մինիստրը սկսեց հանգամանորեն նկարագրել ռուսական «կենսական» շահերը հյուսիսային իրանում, որոնք հենվում են «աշխարհագրական հարևանության», «հարյուրամյա քաղաքականություն» և այդ երկրում Ռուսաստանի ֆինանսական ներդրումների վրա: Իզվոլսկին նշեց, որ այդ բոլոր ջանքերի պտուղները հարցականի տակ կդրվեին, եթե մի այլ ազգ այնտեղ սկսեի կառուցել երկաթուղիներ, հեռագրական գծեր և խճուղային ճանապարհներ: Այդ պատճառով ինքը ցանկանում էր իմանալ, արդյոք Գերմանիան չի՞ բողոքի, եթե ինքը պայմանավորվի իրանի հետ, որպեսզի վերջինս իր վրա պարտավորություն վերցնի՝ առանց Ռուսաստանի նախնական համաձայնության որևէ պետության շտա նման տիպի կոնցեսիաներ:

Մյուլլերը զգուշորեն պատասխանեց, որ Գերմանիան իրանում հետապնդում է լուրջ առևտրական նպատակներ և միաժամանակ չի ժխտում, որ իրանը Ռուսաստանի համար հանդիսանում է կարևոր գործոն, սակայն ցանկալի կլինեի, որ Իզվոլսկին գրավոր ձևով շարադրեր իր առաջարկությունները, որպեսզի արագորժմինիստրությունում կարողանան դրանք քննարկել: Ընդ որում Գերմանիայի համաձայնությունը կհեշտացվեր, ավելացրեց նա, եթե ռուսական մինիստրը պրեզմբուլյում հաստատեր իր բանավոր համաձայնությունը Բաղդադի երկաթուղու շինարարությունը չարգելակելու մասին և խոստանար, որ Ռուսաս-

²⁸ DDF. vol. X, № 244 (Պիշոնի 1906 թ. հոկտեմբերի 14/27-ի զրույցում):

տանը չի դիմագրի այդ ճանապարհի միացմանը իրանական երկաթուղային գծերին, երբ դրանք արդեն կառուցված լինեն: Մյուսները ուղղակի ակնարկում էր այդ հարցի առթիվ հատուկ համաձայնագիր կնքելու անհրաժեշտության մասին: Իզվոլսկին համաձայնվեց և անցավ Քեհրանում գերմանական բանկի հարցին, երկյուղ արտահայտելով, որ, ըստ լուրերի, բանկի համար Գերմանիան պահանջում է երաշխավորել իրանական մաքսատների եկամուտները, այն դեպքում, երբ երկրի բոլոր մաքսային եկամուտներն արդեն գրավ են դրված: Մյուսները կրկին անգամ հավաստիացրեց մինիստրին գերմանական այդ ձեռնարկության բացառապես «առևտրական» նպատակների մասին և կարծիք հայտնեց, որ եթե Իրանի բոլոր մաքսային եկամուտներն արդեն բաշխված են, ապա բանկն Իրանին չի հատկացնի նշանակալից գումարներ:

Հաջորդ հարցը Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի մասնակցության խնդիրն էր Բաղդադի երկաթուղու շինարարությանը, ինչպես նաև անգլո-ռուսական բանակցությունների հարցը: Ընդ որում Իզվոլսկին աշխատում էր համոզել Մյուսներին, որ Անգլիայի հետ բանակցությունները բնավ ուղղված չեն Գերմանիայի դեմ և առհասարակ չեն շոշափում ընդհանուր քաղաքական հարցեր²⁹:

Իզվոլսկին վերադարձավ Պետերբուրգ իր բեռլինյան զրույցներով լրիվ բավարարված³⁰, որովհետև նրան մեկ անգամ ևս հավաստեցին, որ Գերմանիան ոչինչ չունի անգլո-ռուսական համաձայնագրի դեմ, եթե այն անմիջականորեն չշոշափի Գերմանիայի շահերը. բացի այդ, նա ստացավ այնպիսի տպավորություն, որ Բեռլինում դեմ չեն հրաժարվել Իրանում գերմանական գործունեության ակտիվացումից՝ Բաղդադի երկաթուղու հարցում Ռուսաստանի համապատասխան զիջումների դեպքում:

Անգլո-ֆրանսիական դիվանագիտությունը մեծագույն տագնապով էր հետևում Պետերբուրգի ձգտմանը՝ Գերմանիայի հետ հարաբերությունները բարելավելու ուղղությամբ: Բոմպարը արդեն խոսում էր երեք միապետների դաշինքի վերականգման մասին³¹, իսկ Ռուսաստանում

²⁹ Բանակցությունների մասին մանրամասն տե՛ս 1906 թ. հոկտեմբերի 16/29-ի Մյուսներգի հաշվետվությունը (GP, Bd. XXV, t. I, № 8649):

³⁰ Տե՛ս Բուդիստոնի 1960 թ. հոկտեմբերի 22-ի (նոյեմբերի 4-ի) և Նիբոլսոնի հոկտեմբերի 25-ի (նոյեմբերի 7-ի) հաղորդագրությունները (DDF, vol. X, № 257; BD, vol. IV, № 369; Տե՛ս նաև՝ H. Nicolson, Sir Arthur Nicolson, London, 1930, p. 233):

³¹ DDF, vol. X, № 285 (Բոմպարի 1906 թ. նոյեմբերի 3/16-ի նամակը Պիշոնին)։

անգլիական դեսպան Նիքոլսոնը հոռետեսորեն գրում էր, թե անհրաժեշտ է բավարար համարել այն, որ Իզվոլսկին Բեռլինում անգլո-ռուսական բանակցությունների վերաբերյալ որևէ պարտավորություն իր վրա չի վերցրել³²:

Նոյեմբերի 1/14-ին և 2/15-ին Ռայխստագում ֆոն Բյուլովի ելույթից հետո, որտեղ գերմանական կանցլերը ամենաշեղծ արտահայտություններով նկարագրեց Գերմանիայի և Ռուսաստանի միջև հարաբերությունների վիճակը, ֆրանսիական դեսպանը վերջնականապես համոզվեց, որ Բեռլինի և Պետերբուրգի միջև «վերջին թուխպերը» արդեն ցրվել են, «Բյուրկի համաձայնագիրը վերածնվել է և հավանական է, որ նույնիսկ ճշտվել է»։ Ավելին, նա նույնիսկ կասկածում էր, որ համաձայնագրին մասնակցում է նաև Ավստրո-Հունգարիան³³:

Բեռլինի և Պետերբուրգի միջև շարունակվող մերձեցումը ստիպեց լոնդոնին դիմել կանխավճարի սեծովյան նեղուցների վերաբերյալ։ 1906 թ. նոյեմբերի վերջին անգլիացիները հասկացրին Իզվոլսկուն, որ բրիտանական կառավարությունը հակված է փոխելու իր տեսակետը սեծովյան նեղուցների հարցում։ Նիքոլսոնի վկայությամբ, հենց այդ պահից բանակցությունների մթնոլորտը դարձավ ավելի բարենպաստ³⁴:

1907 թ. փետրվարի 1/14-ին տեղի ունեցավ ցարական կառավարության հատուկ խորհրդակցություն, որը նվիրված էր առաջիկա անգլո-ռուսական համաձայնագրի քննարկմանը։ Իզվոլսկին հայտարարեց, որ «Անգլիայի հետ համաձայնագիրը կարող է տալ սպասվող արդյունքները և կանխել միջազգային բարդությունների հնարավորությունը միայն այն դեպքում, եթե այն առարկություններ առաջ չբերի երրորդ պետությունների կողմից և առաջին հերթին, իհարկե, Գերմանիայի կողմից, որը, ինչպես ցույց տվեցին մարոկկոյական իրադարձությունները, չափազանց նախանձախնդրորեն է վերաբերվում այն համաձայնագրերին, որոնք կնքվում են առանց նրա իմացության և որոնք ինչ-որ հարցում կարող են շոշափել նրա դիրքերը որպես համաշխարհային պետություն»³⁵։ Այնուհետև, հիշեցնելով Իրանում Գերմանիայի գործունեության և Բաղդադի երկաթուղու կապակցությամբ Բեռլինի ելույթներին

³² BD, vol. IV, № 236 (Նիքոլսոնի 1906 թ. հոկտեմբերի 25-ի (նոյեմբերի 7-ի) նամակը Գրեյին)։

³³ Նույն տեղում։ Անհրաժեշտ է նշել, որ Բյուրկի համաձայնագրի ստույգ բովանդակությունը հայտնի չէր Ֆրանսիայում ընդհուպ մինչև 1917 թվականը։

³⁴ H. Nicolson, նշվ. աշխ., էջ 243.

³⁵ «Красный архив», 1935 г., т. 2—3 (69—70), стр. 20.

մասին, մինիստրը առաջարկեց «առավել որոշակիորեն» լեզու գտնել արևմտյան հարևանի հետ և սահմանազատել փոխադարձ շահերի բնագավառները:

Հատուկ խորհրդակցությունում բոլոր ելույթ ունեցողները (այդ թվում նաև ռազմական հիմնարկությունների ներկայացուցիչները) թեև «միաձայն» արձանագրեցին Ռուսաստանի համար Բաղդադի երկաթուղու վնասակար լինելը առևտրատնտեսական և ռազմաստրատեգիական տեսակետից, սակայն այնուհանդերձ արտահայտվեցին հօգուտ երկաթուղու վերաբերյալ Գերմանիայի հետ համաձայնագրի կնքելու³⁶:

Այսպիսով, Բաղդադի երկաթուղու հարցում Պետերբուրգի կաբինետի հայացքների մեջ տեղի ունեցավ բեկում: Ցանկալի համարվեց այդ ձեռնարկության վտանգից փրկություն գտնել ոչ թե նրա շինարարությանը դիմադրելու, այլ Գերմանիայի հետ անմիջական համաձայնության մեջ մտնելու միջոցով: Քանի դեռ կար այդ ճանապարհի շինարարության դեմ անգլո-ռուսական համատեղ դիմադրության հույսը, ցարական մինիստրները նույնիսկ չէին էլ մտածում նման համաձայնագրի մասին: Սակայն այդ հարցի նկատմամբ Անգլիայի տեսակետի փոփոխությունը ստիպեց Ռուսաստանին վերանայել նաև իր դիրքը³⁷: Բացի այդ, ցարական դիվանագիտությունն այնքան էլ հավատ չէր ընծայում անգլիական արտաքին գործերի մինիստրի խոստումներին՝ այդ հարցում գործել միայն Ռուսաստանի հետ համաձայնեցված կերպով, և այդ պատճառով գերադասեց անձամբ հոգ տանել իր շահերի նկատմամբ, առավել ևս, որ նրանք բոլորովին չէին համընկնում անգլիական շահերի հետ:

Համաձայն փետրվարի 1(14)-ի հատուկ խորհրդակցությունում արտահայտված ցանկությունների, արտաքին գործերի մինիստրությունում մշակվեց համաձայնագրի առաջին նախագիծը, որը փետրվարի 20-ին Իզվոլսկին հանձնեց Ֆոն Շյոնիե³⁸: Այդ նախագիծով Ռուսաստանը պարտավորվում էր շարժելակել Բաղդադի ճանապարհի շինարարությունը և հեշտացնել նրանում օտարերկրյա կապիտալի մասնակցությունը:

³⁶ Նույն տեղում, էջ 21—22:

³⁷ 1906 թ. գարնանը Նույնիսկ լուրեր էին տարածվել, որ մոտակա ժամանակներում հավանական է Բաղդադի երկաթուղու վերաբերյալ անցյալ անգլո-դեմա-նական համաձայնագրի կնքումը: (Տե՛ս DDF, vol. X, № 108; АВПР, ф. Посольство в Берлине, оп. 509 в, д. 21е, л. 12).

³⁸ АВПР, ф. Персидский стол, д. 4148, л. 2; GP, Bd. XXV, t. I, № 8580. Anlage.

Դրա փոխարեն գերմանական կառավարությունը հայտարարելու էր, որ Իրանում քաղաքական շահեր չունի, այլ հետապնդում է բացառապես առևտրական նպատակներ, ճանաչելու է Ռուսաստանի քաղաքական, և տնտեսական բնույթի հատուկ շահերի առկայությունը Իրանի հյուսիսային շրջաններում և հրաժարվելու է իր համար քաղաքական կամ տնտեսական բնույթի կոնցեսիաներ (երկաթուղային, ճանապարհային, հեռագրական և այլն) ձեռք բերելուց Իրանի այն շրջաններում, որոնք ընկած են Բաղդադի գծից հյուսիս³⁹։ Բացի այդ, կողմերը պարտավորվելու էին որոշումներ չկայացնել Բաղդադի երկաթուղու և Իրանում ապագայում կառուցվող երկաթուղիների միջև միացնող գծեր կառուցելու վերաբերյալ, առանց նախապես այդ հարցի կապակցությամբ միմյանց միջև պայմանավորվելու⁴⁰։ Պետերբուրգում աշխատում էին նաև ի չիք դարձնել Բեռլինի ձգտումը Բաղդադի գծի ցանցը իրանական տերիտորիայի վրա տարածելու ուղղությամբ։ Դա ցարական մինիստրների տեսակետից Բաղդադի երկաթուղու շինարարության ամենատհաճ հետևանքներից մեկն էր հանդիսանում։

Այսպիսով, ռուսական նախագծում միայն մեկ հարցում էին ընդառաջ գնում գերմանական ցանկություններին. խոստանում էին շարգելակել Բաղդադի երկաթուղու շինարարությունը։

Նախագիծը Գերմանիայում առաջ բերեց խիստ առարկություններ։ Հատկապես Բեռլինում ոչ մի կերպ չէին ցանկանում զրավոր ձևով հրաժարվել Իրանում ամեն տեսակի քաղաքական շահերից։ Թուրքիայում գերմանական դեսպան Մարշալլի կարծիքով, «Գերմանիան ընդհանրապես չի կարող նման հայտարարություն անել մի այլ պետության»⁴¹։ Ընդհանրապես նախագծի երկրորդ կետը բնավ չէր համապատասխանում Գերմանիայի շահերին, որովհետև նրանում նույնիսկ ոչ մի խոսք չէր ասվում այն մասին, որ Պետերբուրգը սկզբունքորեն համաձայն է Բաղդադի երկաթուղին միացնել իրանական երկաթուղիների հետ։

³⁹ Անգլո-ռուսական համաձայնագիրը դեռ չէր կնքվել և բնականաբար Պետերբուրգը չէր ցանկանում ժամանակից շուտ մատնացույց անել այն գոտու սահմանները, որի նկատմամբ ինքը հավակնություններ ուներ։

⁴⁰ АВПР, ф. Персидский стол, д. 4148, л. 2; GP, Bd. XXII, t. I, № 7364, s. 38—41; Bd. XXV, t. I, № 8580, Anlage; Bd. XXV, t. I, № 8649, s. 231—234, № 8580, s. 123—124.

⁴¹ GP, Bd. XXV, t. I, № 8582 (Մարշալլի 1907 թ. մաքտի 4/17-ի նամակը Բյուլոպին)։

Երկարատե քննարկումից հետո մշակվեց համաձայնագրի գերմանական հակառակադիր, որը 1907 թ. հունիսի 5/18-ին հանձնվեց Պետերբուրգի կաբինետին: Այստեղ առաջարկվում էր պայմանավորվել իրանում ռուս-գերմանական հարաբերություններին վերաբերող բոլոր վիճելի հարցերի շուրջը: Սակայն հակառակագծում խոսք անգամ չէր ասվում այն մասին, որ Գերմանիան ճանաչում է Ռուսաստանի հատուկ շահերը իրանում և հրաժարվում է այդ երկրում իր ունեցած քաղաքական շահերից: Ավելին, Ռուսաստանից պահանջվում էր իրանում գերմանական առևտրի նկատմամբ ճանաչել ռառանց որևէ անհավասարության, տնտեսական ազատության» սկզբունքը: Այնուհետև երկրորդ հոդվածը ենթարկվում է լրիվ փոփոխության: Այն վերածվում է համաձայնագրի կենտրոնական հոդվածի: Նրանում առաջ է քաշվում մի պահանջ, ըստ որի Ռուսաստանը կառուցելու է երկաթուղային մի գիծ, որը իրանական ճանապարհների ապագա ցանցը միացնելու է Բաղդադի երկաթուղուն: Այն պետք է դուրս գար դեպի թուրք-իրանական սահմանը (հանեկինի մոտ) և պետք է կառուցվեր Բաղդադի երկաթուղու Սադիզե—հանեկին ճյուղավորման շինարարության ավարտի պահին: Բացի այդ, երկու կառավարությունները պարտավորվելու էին այն գծերի վրա, որոնք ապագայում իրանը միացնելու էին Թուրքիայի հետ, շմտցնել տարանցիկ մաքսատուրքեր և տարբերակված տարիֆներ⁴²:

Գերմանական հակառակադիր ստանալուց առաջ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությունում պարզեցին, որ դեռևս 1907 թ. ապրիլին Թեհրան է ժամանել «Գերմանական արևելյան բանկի» («Ռոյալ օրիենտալ») դիրեկտոր Հերբերտ Գուտմանը, որպեսզի 1906 թ. հունիսին կնքված գերմանո-իրանական կոնվենցիայի հիման վրա բանակցություններ վարի բանկային կոնցեսիա ստանալու համար⁴³: Գուտմանի առաջ քաշած բանկային կոնցեսիայի պահանջները շահի կողմից գաղտնապես հանձնվեցին Թեհրանում ռուսական դեսպանորդ Գարտվիգին և հաղորդվեցին Պետերբուրգ⁴⁴: Իր հաղորդագրության մեջ դեսպանորդը գրում էր. «Գերմանացիների կողմից ներկայացված պահանջների ուսումնասիրությունից երևում է, որ հակառակ բազմիցս տրված իրենց հավաստիացումներին, գերմանական կառավարությունը անկասկած

⁴² GP, Bd. XXV, t. I, № 8588, Anlage; АВПР, ф. Персидский стол, д. 4148, л. 118—119.

⁴³ ЦГИАЛ, ф. 560, оп. 28, д. 359, л. 12, 179.

⁴⁴ Центральный Государственный военно-исторический архив, ф. 2000, оп. 1, д. 1028, л. 200(այսուհետև՝ ЦГВИА).

փնտրում է քաղաքական արտոնություններ, որոնք ընդ որում բացահայտ կերպով ուղղված են Պարսկաստանում մեր շահերի դեմ⁴⁵:

Այն հանգամանքը, որ Բեռլինի ներկայացրած հականախագծում բացակայում էր Իրանում գերմանական քաղաքական շահերից հրաժարվելու և այդ երկրում ռուսական հատուկ շահերը ճանաչելու հիշատակությունը, Թեհրանից ստացված հաղորդագրության ֆոնի վրա, պետք է ստիպեր ցարական դիվանագիտությանը մտածմունքի մեջ ընկնել: Միանգամայն ակնհայտ էր, որ գերմանացիների գործունեությունը Իրանում բացարձակապես չի համապատասխանում Շյոնի, Մյուլբերգի և Բյուլովի կողմից արված բազմաթիվ հավաստիացումներին, Իրանում գերմանական քաղաքականության ճբացառապես առևտրական նպատակների մասին⁴⁶: Բեռլինում ռուսական դեսպան Օստեն-Սակենը միամտորեն փորձում էր Բեռլինի կաբինետի խոսքի և գործի միջև եղած անհամապատասխանությունը բացատրել Վիլհելմ II-ի վրա արդյունաբերական և ֆինանսական ջրջանների անմիջական ազդեցությամբ, հավաստիացնելով, որ արտգործմինիստրությունը դրա հետ ոչ մի առնչություն չունի, որովհետև իբր թե նա հաճախ տեղյակ չի լինում այն նախագծերին, որոնք ծրագրվում են կայզերի և նրա շրջապատի գործիչների կողմից⁴⁷:

Բանկային կոնցեսիան Գերմանիայի կողմից ներկայացված պահանջների ծավալով մերժվելուց հետո⁴⁸ ուղիղ երեք օր անց, հուլիսի 14/27-ին Պետերբուրգում գումարված հատուկ խորհրդակցությունում քննարկվում էր գերմանական հականախագիծը և ցարական արտգործմինիստրությունում արդեն մշակված համաձայնագրի նոր ռուսական նախագիծը: Վերջինս պարունակում էր նշանակալից զիջումներ Գերմանիային: Այսպես, օրինակ, երկրորդ հոդվածում ռուսական կառավարությունը պարտավորվում էր հյուսիսային Իրանում ապագա երկաթուղային ցանցը Բաղդադի ճանապարհին միանալու դեպքում ճմյուս ուղղությունների համեմատությամբ նախապատվությունը տալ այն գծին, որը

⁴⁵ Նույն տեղում, ք. 202: АВПР, ф. Миссия в Персии, оп. 528 в, 1906—1908 гг., д. 45, л. 26.

⁴⁶ АВПР, ф. Персидский стол, 1907 г., д. 4455, л. 204—208; АВПР, ф. Канцелярия, 1907 г., д. 17, л. 180 (Օստեն-Սակենի 1907թ. հունիսի 23-ի (հուլիսի 12-ի) նամակը Իզվուկույն):

⁴⁷ Այդ մասին մանրամասն տե՛ս Վ. Ա. Բայբուրդյան, Իրանում իմպերիալիստական Գերմանիայի քաղաքականության հարցի շուրջը 1905—1914 թթ. «Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 4 (Իրան), Երևան, 1969:

թուրք-պարսկական սահմանում միանալու էր Սադիշե-հանեկին գծի հետ...»⁴⁸։ Հենց այս պարտավորությունն էլ քննադատության ենթարկվեց խորհրդակցությունում բոլոր ելույթ ունեցողների կողմից։ Ֆինանսների մինիստր Կոկովցովը, օրինակ, նշեց, որ Գերմանիայի հետ կնքվող համաձայնագրի գլխավոր նպատակն է իրանը մեկուսացնելու Բաղդադի ճանապարհից, իսկ դրանից խուսափելու համար անհրաժեշտ է կասեցնել Սադիշե-հանեկին ճյուղի միացումը իրանական երկաթուղիների ապագա ցանցի հետ։ Նրա կարծիքով, երկրորդ հոդվածը պետք էր փոխել «մեզ լրիվ ազատություն տալու իմաստով կառուցելու հանեկինի հետ միացնող գծեր միայն այն ժամանակ, երբ դա մեր կողմից դիտվի ցանկալի»։ Համենայն դեպս մեր ձեռքերը չկապելու համար թեկուզև բարոյական պարտավորությամբ»⁴⁹։

Համարյա բոլոր ելույթ ունեցողները միահամուռ կերպով պաշտպանեցին Կոկովցովին, և Իզվոլսկուն մնում էր միայն խոստանալ, որ երկրորդ հոդվածը փոփոխության կենթարկվի արված դիտողությունների համաձայն։

1907 թ. օգոստոսի սկզբին վերջապես պետք է տեղի ունենար Նիկոլայ II-ի պատասխան այցը (առաջինը տեղի էր ունեցել Բյորկում) գերմանական կայզերին։ Այդ այցելությունը տեղի ունեցավ Սվինեմյունդում օգոստոսի 3-ին։ Հանդիպման օրերին Բեռլինում Իզվոլսկու քաղաքականությունը դիտում էին որպես ռուս-գերմանական մերձեցման շահերին հիմնականում համապատասխանող քաղաքականություն, և այդ պայմաններում, իհարկե, իմաստ չունեի շոշափել իրանի և Բաղդադի երկաթուղու մասին միանգամայն փափկանկատ թեման և դրանով իսկ վտանգի տակ դնել կարգավորվող հարաբերությունները։ Ըստ երկվույթին խորհրդակցության ժամանակ որոշեցին ռուսական այցելուների նկատմամբ զրավել ամենաբարյացակամ դիրք ե. հնարավորության սահմաններում խուսափել վտանգավոր թեմաներից։ Միայն դրանով կարելի է բացատրել այն, որ վերոհիշյալ հարցերը Բյուլովի և Իզվոլսկու զրույցի ժամանակ շոշափվեցին «միայն ընդհանուր կերպով»։ Ընդ որում գերմանական կանցլերը, շնայած նրան, որ Մյուլբերգի նամակում հիշյալ հարցը քննության էր ենթարկվում վերին աստիճանի մանրամասնորեն և շեշտվում էր, որ Գերմանիայի համար համաձայնագրի ամբողջ նշանակությունը ամփոփվում է երկրորդ հոդվածում և որ «այս-

⁴⁸ ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1380, л. 181.

⁴⁹ АВПР, ф. Персидский стол, д. 2292, л. 46—47 (1907 թ. հուլիսի 14/27-ի հառաչել իւրհրդակցութան մասյան)։

մանագիրը առանց երկրորդ հոդվածի ոչ մի արժեք չունի և գերմանական պետական այն գործիչը, որը կկնքեր պայմանագիր առանց այդ երաշխիքի, ծանր վիճակում կգտնվեր հասարակական կարծիքի առջև⁵⁰, վկայակոչում էր այն, որ ինքը չի հիշում Շյոնի կողմից իզվոլսկոն հանձնված հուշագրի բոլոր մանրամասնությունները: Այդ պատճառով նա խնդրեց իզվոլսկոն հիշյալ հարցի վերաբերյալ բանակցությունները շարունակել Պետերբուրգում⁵¹: Առաջարկությունը միանգամայն համապատասխանում էր նաև ռուսական մինիստրի մտադրություններին: Վերջինս հայտարարեց, որ կարևոր է պայմանավորվել այնպես, որ իր տնտեսական ներթափանցմամբ դեպի Իրան Գերմանիան չվնասի Ռուսաստանի ավանդական շահերին այդ երկրում և դրանով իսկ առիթ չտա երկու երկրների միջև անցանկալի պայքարի⁵²:

1907 թ. օգոստոսի 18/31-ին ստորագրվեց անգլո-ռուսական համաձայնագիրը, որով Միջին արևելքը այս երկու պետությունների միջև բաժանվում էր ազդեցության գոտիների: Համաձայնագիրը կնքվիս Ռուսաստանը և Անգլիան հետապնդում էին միանգամայն տարբեր նպատակներ. ցարիզմը ցանկանում էր ժամանակավորապես կոնսերվացման ենթարկել իր դիրքերը Միջին արևելքում և իր համար ապահովել խաղաղ զարգացման այնքան անհրաժեշտ շրջանը, մինչդեռ անգլիական իմպերիալիզմը առաջին հերթին ձգտում էր դաշնակից ձեռք բերել Գերմանիայի դեմ մղվող պայքարում⁵³:

Բնականաբար, անգլո-ռուսական համաձայնագրի կնքման լուրը գերմանական մայրաքաղաքում ընդունվելու էր մեծագույն դժգոհությամբ⁵⁴: Մյուս կողմից լոնդոնը տարբեր ուղիներով ճնշում էր գործադրում Պետերբուրգի վրա, պահանջելով Գերմանիայի հետ հարաբերությունների հարցում չխախտել դաշնակցային պարտավորությունները Անգլիայի հանդեպ⁵⁵: Այսպիսով, ցարական կառավարության առջև կանգնած էր դժվարին երկրնտրանք. Բեռլինի հետ անշատ բանակցությունների շարունակումը կնշանակեր ռիսկի ենթարկել հարաբերու-

⁵⁰ GP, Bd. XXII, № 7375 (Մյուլլերգի 1007 թ. հուլիսի 9/22-ի նամակը Բյուլլովին):

⁵¹ АВПР, ф. Канцелярия, 1907 г., д. 42, л. 209.

⁵² GP, Bd. XXII, № 7379 (Շյոնի 1907 թ. հուլիսի 28-ի (օգոստոսի 10-ի) նամակը Բյուլլովին):

⁵³ Տե՛ս H. Nicolson, նշվ. աշխ., էջ 234.

⁵⁴ Տե՛ս GP, Bd. XXV, т. I, № 8536.

⁵⁵ Տե՛ս BD, vol. VI, № 71.

թյունները լոնդոնի հետ. ենթարկվել անգլիական ճնշմանը, կնշանակեր սպառնալիքի տակ դնել ռուս-գերմանական հարաբերությունները: Իզվուլսկին ընտրեց երրորդ ուղին. նա ուղղակի դադարեցրեց բանակցությունները Գերմանիայի հետ: Միաժամանակ լոնդոն ուղարկվեց հանգրստացուցիչ մի նամակ, որտեղ ասվում էր, որ Ռուսաստանում, ինչպես Անգլիայում ու Ֆրանսիայում, «գերմանական նախագիծը համակրանքի շարժանացավ», և բացատրվում էր, որ Պետերբուրգի և Բեռլինի միջև կարծիքների փոխանակության «միակ նպատակն էր երաշխավորել Ռուսաստանի կենսական շահերը Պարսկաստանում, այսինքն այն նույն շահերը, որոնք ճանաչվել են Անգլիայի կողմից նրա հետ վերջերս կնքված կոնվենցիայում», մինչդեռ Գերմանիան ցանկանում էր «հաղթահարել Ռուսաստանի սկզբունքային դիմադրությունը Բաղդադի երկաթուղու հարցում» և այդ երկաթուղու նախագծի ո՛չ ֆինանսական և ո՛չ էլ տեխնիկական կողմերը կարիներենների միջև երբեք չեն քննարկվել⁵⁶:

Գերմանիայի հետ բանակցությունները դադարեցնելու համար Իզվուլսկին ընտրեց գործողության բավականին հետաքրքիր մեթոդ: 1907 թ. դեկտեմբերի 7/20-ից (այսինքն՝ լոնդոն ուղարկված նամակից մեկ օր անց) Պետերբուրգից Բեռլին, ռուսական դեսպանության և մասնավորապես Օստեն-Սակենի «անձնական ծանոթության» համար սկսում են ուղարկել Գարտվիգի հեռագրերի պատճենները Թեհրանում գերմանական դեսպանորդի պաշտոնակատար Ռիխտհոֆենի քաղաքական ուժգին գործունեության մասին, այն հաջվով, որ Օստեն-Սակենը այդ հեռագրերի բովանդակությունը հաղորդի գերմանական արտգործմինիստրությանը⁵⁷:

Դեկտեմբերի 8/21-ին Իզվուլսկին հանդիպեց Պետերբուրգում գերմանական նոր դեսպան Պուրտալեսի հետ և խոսակցություն սկսեց Իրանի և Բաղդադի երկաթուղու մասին: «Ընս օգտվեցի այդ առիթից, — հաջորդ օրը գրում էր նա Օստեն-Սակենին, — որպեսզի բացեիրաց բացատրեմ կոմս Պուրտալեսին, որ մեզանում ակամայից կասկածներ են ծագում նշված նպատակին հասնելու հնարավորության մասին»: «Մեր կողմից, — հայտարարում է Իզվուլսկին Պուրտալեսին, — գոյություն ունի կատարյալ պատրաստակամություն ընդառաջ գնալու Գերմանիային Բաղդադի երկաթուղու հարցում...», «Սակայն այդ դեպքում Գերմանիան ևս պետք է միանգամայն անկեղծորեն հրաժարվի հյուսիսային Պարսկաստանում մեր

⁵⁶ B. Siebert, Graf Benckendorffs diplomatischer Schriftwechsel. Bd. I, Berlin, 1930. S. 9ff; տե՛ս նաև՝ АВПР, ф. Политархив, д. 3627, л. 13.

⁵⁷ SՆ՝ս АВПР, ф. Посольство в Берлине, оп. 509в, д. 75.

քաղաքական-տնտեսական տիրապետող շահերին դիմագրավելուց և նրշված շրջանում դադարեցնի իր առաջընթաց քաղաքականությունը⁵⁸։ Այնուհետև մինիստրը սկսում է մեկ առ մեկ թվարկել այն բոլոր փաստերը, որոնք վկայում էին Իրանում գերմանական իմպերիալիզմի տնտեսական և քաղաքական ակտիվության մասին, սկսած բանկային կոնցեսիայից, վերջացրած Ռիխտհոֆենի գործունեության վերաբերյալ վերջին հաղորդագրություններով, շմռանալով հիշատակել նաև համաձայնագրի գերմանական հակառակագծի վերին աստիճանի կտրուկ բնույթի մասին։ «Եթե ի նկատի ունենանք, որ պարոն Շտեմրիխը, Թեհրանում Գերմանիայի դիվանագիտական գործունեության այդ եռանդուն գործիչը, այժմ դարձել է գերմանական արտաքին գործերի մինիստրի մերձավոր օգնականը,— շարունակում էր Իզվուսկին,— ապա միանգամայն հասկանալի է, որ մենք անհանգստություն մենք նայում պարսկական գործերի բնագավառում Գերմանիայի հետ մեր հարաբերությունների ապագային և ինքներս մեզ հարց ենք տալիս, հնարավո՞ր է արդյոք հասնել մեր կողմից այնքան ցանկալի համաձայնագրին։ Մենք չենք կարող չզգալ, որ Պարսկաստանում կանգնած ենք պատմական իրավունքների և շահերի հողի վրա, և եթե ստիպված լինենք սրտի ճմլոցով այդ հողի վրա պայքարի դուրս գալ Գերմանիայի հետ, իհարկե, միանգամայն խաղաղ պայքարի, դրա համար մեր տրամադրության տակ կան ազդու միջոցներ։ Բայց կրկնում եմ, մենք անկեղծորեն ցանկանում ենք խուսափել այդ պայքարից և գտնել մի այնպիսի ձևակերպում, որը հավասարապես ընդունելի լինի երկու կողմերի համար»⁵⁹։

Թեև գերմանական դեսպանը, իր կառավարությանը հաղորդելով այդ զրույցի մասին, գրում էր, որ այնուամենայնիվ նա ստացավ այն տպավորությունը, որ Իզվուսկին «վճռականորեն չի ցանկանում, որ բանակցությունների թելերը կտրվեն»⁶⁰, սակայն իրադարձությունները ցույց տրվեցին, որ ցարական մինիստրը հենց այդ էր ցանկանում։ Չնայած Բեռլինի բոլոր հավաստիացումներին, որ Իրանում Գերմանիան աշխատում է ձեռք բերել միայն առևտրական գործունեության ազատություն⁶¹ և չնայած նրան, որ Բեռլինը Թեհրանից ետ կանչեց Ռիխտհոֆենին և նրա

⁵⁸ Նույն տեղում, Ժ. 21 Դ., Լ. 59 (Իզվուսկու 1907 թ. գեկտեմբերի 9/22-ի նամակը Օստեն-Սակենին)։

⁵⁹ АВІР, ф. Посольство в Берлине, оп. 509в, д. 21 г., л. 60—61. Պարսկաստանի հաշվետվությունն այդ մասին տե՛ս GP, Bd. XXV, t. 1, № 8592։

⁶⁰ Նույն տեղում։

⁶¹ АВІР, ф. Посольство в Берлине, оп. 509в, д. 75, л. 84—86.

փոխարեն նշանակեց Քվադթին, համաձայնագրի վերաբերյալ բանակ-
ցություններն ընդհատվեցին համարյա երեք տարի:

Բանակցությունների ընդհատումով արտաքնապես թվում էր, որ Պետերբուրգը ուզում է հակադդել Գերմանիայի գործունեության ակ-
տիվացմանն Իրանում: Իսկ անգլիացիների համար անշատ բանակցու-
թյունների ընդհատումը կարող էր թվալ, որպես Պետերբուրգի վրա
իրենց ճնշում գործադրելու հետևանք: Մինչդեռ իրականում, թեև դա
ունի որոշակի նշանակություն, պատճառներն ավելի խորն էին: Կաս-
կած չկա, օրինակ, որ ռուս-գերմանական բանակցությունների սառեց-
մանը նպաստեց նաև այն, որ շուտով ցարիզմի ուշադրությունը սեռե-
վեց նրա համար նշանակալիորեն ավելի սուր և վտանգավոր այն իրա-
դարձությունների վրա, որոնք ծավալվեցին Բալկաններում: 1908—
1909 թթ. բալկանյան իրադարձությունների հետևանքով, համաձայնա-
գրի վերաբերյալ հարցը չէր բարձրացվում նաև Բեռլինի կաբինետի
կողմից:

Ռուս-գերմանական բանակցությունների ընդհատումից հետո Բեռ-
լինը Թեհրանում իր դեսպանորդին խորհուրդ տվեց դրսևորել «զսպվա-
ծություն», հույս ունենալով, որ ռուսները չեն կարող Իրանում երկար
ժամանակ խաղաղ համագործակցել անգլիացիների հետ և վերջ ի վերջո
անգլո-ռուսական Անտանտը, որը գերմանացիները համարում էին «չա-
փից ավելի հակաբնական», ներսից կալայթի⁶²: Երբ, 1909 թ. փետրվա-
րին, Ավստրո-Հունգարիան առաջարկեց Գերմանիային պայմանավոր-
վել Իրանում Անգլիայի և Ռուսաստանի դեմ համաձայնեցված քաղա-
քականություն վարելու մասին, Բյուլովը խորհուրդ տվեց «թողնել, որ
նրանք այրվեն սեփական յուղի մեջ»: Նրա կարծիքով, Գերմանիայի և
Ավստրո-Հունգարիայի կողմից միջամտությունը միայն «հիմնախմբեր
Անտանտի երկրները»⁶³:

Սակայն այդ դիվանագիտական զսպվածությունն ուղեկցվում էր
Իրանում գերմանական ազդեցությունն ամրապնդելու անդադրում աշ-
խատանքով: Այդ գործունեությունը ուժեղացավ հատկապես 1908 թ.
վերջի և 1909 թ. հեղափոխական իրադարձությունների շրջանում: Գեր-
մանիան սկսեց Իրան ներմուծել մեծ քանակությամբ զենք և զինա-
մթերք⁶⁴, որը որպես կանոն բաժանվում էր հակառուսական տրամա-
դրություններ ունեցող ցեղերի շրջանում: Իրանական Ատրպատականում
գերմանացիները (հատկապես «Մոսսիգ և Շյունեման» ընկերությունը)

⁶² GP, Bd. XXVII, t. II, № 10072:

⁶³ Նույն տեղում, № 10079:

⁶⁴ Martin Bradford Cary, նշվ. աշխ., էջ 165:

ձեռնամուխ եղան նաև գործարանային տիպի խոշոր ձեռնարկություններ բացելուն⁶⁵։ Համառ լուրեր էին շրջում նաև այն մասին, որ գերմանացիները պատրաստվում են Թավրիզում բացել նաև զենքի ֆաբրիկա⁶⁶։ 1909 թ. սեպտեմբերին «Մոսսիգ և Շյունեման» ընկերությունը Թավրիզում հրապարակեց շրջաբերական նամակ ուղղված եվրոպական վաճառականներին, որի մեջ առաջարկում էր իր ծառայությունները բեռների տեղափոխության և ապահովագրման գործում⁶⁷։ Դա արդեն ուղղակի ոտնձգություն էր ռուսական «Պարսկական փոխադրամիջոցների բյուրոյի» մենաշնորհային իրավունքների նկատմամբ։ Բացի այդ, «Մոսսիգ և Շյունեման» ընկերությունը ռուսական ազդեցության գոտում սկսեց տարածել մեծ քանակությամբ ապրանքներ⁶⁸։ Հոկտեմբերին ըստացվեց է՛լ ավելի տագնապալից հաղորդագրություն, որ գերմանացիները իրանական ներքին գործերի մինիստրից թույլտվություն են ստացել ռուսական կովկասյան սահմանից 100 կմ հեռավորության վրա գտնվող Ուրմիա լճի վրա նավարկություն կազմակերպելու վերաբերյալ։ Գերմանական ինժեներները պետք է զբաղվեին նաև լճի շրջանում ճանապարհներ անցկացնելու աշխատանքներով⁶⁹։ Այդ կոնցեսսիան խափանելու համար պահանջվեց Թեհրանում ռուսական միսիայի եռանդուն ճնշումը շահական կառավարության վրա, որը ստիպվեց այդ կոնցեսսիան հանձնել ռուսական «Թավրիզի ճանապարհի ընկերությանը»⁷⁰։

Հարկ է նշել, որ 1909 թ. կանցլերի պաշտոնում Բյուլովին փոխարինեց Բեթման-Հոլվեգը։ Քանի որ 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրի կնքումից հետո թշնամական պետությունների օղակը ավելի ու ավելի էր սեղմվում Գերմանիայի շուրջը, այդ պատճառով գերմանական կառավարող շրջաններն իրենց առաջնահերթ խնդիրն էին համարում պայթեցնել թշնամական խմբավորումը, դիվանագիտական կամ ռազմական ճանապարհով նրանից դուրս բերել նրա մեկ կամ մի քանի անդամների։ Հենց այդ խնդիրն էլ դրվեց նոր կանցլեր Բետման-Հոլվեգի վրա, որը հանդիսանում էր գերմանական իմպերիալիզմի «լիբերալ» տարատեսակը և գերմանական «միջին եվրոպական դաշինքի» ստեղծման համոզված կողմնակիցը։

⁶⁵ См. Н. Н. Бобынин, Персия, ее экономическое положение и внешняя торговля 1901—1923, Тифлис, 1923, стр. 37.

⁶⁶ АВПР, ф. Персидский стол, д. 4456, л. 156.

⁶⁷ Նույն տեղում, թ. 164։

⁶⁸ А. Хашаб, Экономическое положение современной Персии и ее торговля с прочими странами. «Мир ислама», СПб., 1912, т. I, № 2, стр. 171.

⁶⁹ АВПР, ф. Персидский стол, д. 4456, л. 168.

⁷⁰ ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3906, л. 2.

Գերմանական նոր կանցլերը, սակայն, շատ շուտով համոզվեց, որ Անտանտի ինքնաքայքայման հույսերը ռեալ չեն։ Այդ պատճառով, օգտորվելով բարենպաստ պահից, գերմանական դիվանագիտութունն Իրանում ակտիվացրեց իր գործունեությունը նաև քաղաքական բացահայտ միջամտության բնագավառում։ 1909 թ. հոկտեմբերին ռուսական միսիային սկսեցին լուրեր հասնել իրանական որոշ մինիստրների և գերմանական ռազմական գործակալի միջև աշխույժ կապերի մասին։ Շահական առաջին մինիստր Սեփահաբարը ռուսական դեսպանորդ Պոկլևսկի-Կոզելլի ճնշման տակ Ճխոստովանեց», որ ինքը, իսկապես, տեսակցություն է ունեցել գործակալի հետ, դրան ավելացնելով, որ Պարսկաստանում գոյություն ունեն զանազան կոմիտեներ, որոնք կցանկանալին պարսկական բանակի ուսուցումը հանձնել գերմանացիներին⁷¹։

1910 թ. սկզբին գործը հասավ Պետերբուրգի և Բեռլինի միջև հարաբերությունների նշանակալից սրմանը։ Դրան մեծապես նպաստեց նաև այն, որ Անգլիան և Ռուսաստանը իրանական կառավարության խնդրանքով որոշեցին Իրանին հատկացնել 10 միլիոն ֆրանկի չափով կանխավճար։ Գերմանական դիվանագետների համար դժվար չէր հասկանալ, որ կանխավճարի պայմանները⁷² կոշված էին ապահովելու ռուսական ցարիզմի և անգլիական իմպերիալիզմի մենաշնորհային դիրքերն Իրանում և ուղղված էին առաջին հերթին Գերմանիայի դեմ։

Բեռլինը առիթը բաց չթողեց Պետերբուրգի կաբինետի վրա կրկին ճնշում գործադրելու համար։ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրի մոտ 1910 թ. հունվարի 5/18-ին դիվանագիտական ընդունելության ժամանակ Պուրտալեսը Իզվոլսկուն հաղորդեց, որ իրեն հանձնարարված է բողոքել վերոհիշյալ հարցի առթիվ⁷³։

Գերմանիայի կողմից ձեռնարկված քայլը ցարական արտաքին գործերի մինիստրությունում առաջ բերեց ընդհանուր տագնապ։ «Գերմանացիները մեզ միշտ ասում էին,—գրում էր իրանական գործերով զբաղվող մինիստրության չինովնիկներից մեկը,—որ իրենք պարսկական գործերում շահագրգռված են ոչ թե քաղաքականապես, այլ միայն տնտեսական առումով։ Սակայն նրանց ներկա ելույթը տեղի է ունենում զուտ քաղաքական հողի վրա։ Եթե մենք այժմ զիջենք նրանց, դա կընշանակի թույլ տալ Գերմանիային մասնակցել պարսկական քաղաքա-

⁷¹ АВІР, ф. Персидский стол, д. 4456, л. 179.

⁷² Մանրամասն տե՛ս «Сборник дипломатических документов, касающихся событий в Персии», вып. IV, стр. 51—52.

⁷³ АВІР, ф. Персидский стол, д. 4457, л. 10.

կանությանը, և այդ քայլը կլինի անդառնալիք: Հեղինակը այնուհետև խորհուրդ էր տալիս Բեռլինին տալ «վճռական հակահարված»⁷⁴:

Իզվոլսկին անմիջապես կապվեց լոնդոնի հետ՝ գործողությունների ընդհանուր պլան մշակելու համար⁷⁵: Վերջ ի վերջո որոշեցին գործել ապօրինի զգուշ, քան դա առաջարկվում էր ցարական շինովնիկի կողմից⁷⁶: Սակայն Պետերբուրգի կաբինետի պատասխանը Պուրտալեսի բողոքին չբավարարեց Բեռլինին: Այնտեղից սկսեցին իսկական «հոգեբանական գրոհ», նպատակ ունենալով ստիպել Ռուսաստանին համաձայնության մեջ մտնել Գերմանիայի հետ: Պուրտալեսին հանձնարարվեց ակնարկել Իզվոլսկուն, որ, եթե Պետերբուրգը Գերմանիային զիջումներ չանի Բաղդադի երկաթուղու հարցում, հնարավոր է գերմանական քաղաքականության հետագա ակտիվացումն Իրանում: Դեսպանի անձնական տեղեկության համար հաղորդվում էր, որ Իրան է մեկնում «Դոյչե Օրիենտ բանկի» ներկայացուցիչ Սայիդ Ռյուֆեն, որին հանձնարարված է «իրագրության հետ ժանդառնալու համար ուղեորություն կատարել Թեհրանից Բաղդադ՝ խանեկինի վրայով (այսինքն՝ ապագա երկաթուղային ճյուղի ուղեգծով): Ռյուֆեի ճանապարհորդության գլխավոր նպատակն էր,—ինչպես խիստ մտերմաբար հաղորդվում էր Պուրտալեսին,—ապրոն Իզվոլսկուն դարձնել ավելի զիջող մեր ցանկությունների նկատմամբ»⁷⁷: Հիշյալ բանկի կողմից Ռյուֆեին հանձնարարված էր նաև պարզել Թեհրանում բանկի բաժանմունք բաց անելու հնարավորությունը⁷⁸: Հարկ է նշել, որ Բեռլինի և Ստամբուլի միջև նախապես համաձայնեցված ծրագրով Թուրքիան անմիջապես աջակցություն ցույց տվեց Սայիդ Ռյուֆեի միսիային: Թուրքական գործակալությունը Թեհրանի շուկայում և հասարակական այլ վայրերում սկսեց լուրեր տարածել Իրանում «գերմանացիների օգտակար գործունեության» մասին, ձրիաբար բաժանում էր Թուրքական թերթեր, որոնք լեփ-լեցուն էին հակառուսական հոդվածներով և այնպիսի նյութերով, որոնք աշխատում էին համոզել ընթերցողին, որ Իրանի միակ փրկիչը Գերմանիան է⁷⁹: Ընդհանրապես

⁷⁴ АВП, ф. Персидский стол, д. 4456, л. 231—232.

⁷⁵ B. Siebert, նշվ. աշխ., Bd. I, № 153.

⁷⁶ Պետերբուրգի պատասխանը, Պուրտալեսին հանձնվեց 1910 թ. հունվարի 27-ին (փետրվարի 9-ին), տե՛ս GP, Bd. XXVII, t. II; № 10091, Anlage. Տե՛ս նաև՝ B. Siebert նշվ. աշխ., Bd. I, № 157.

⁷⁷ GP, Bd. XXVII, t. II, № 10093. (Տե՛ս Շյունի 1910 թ. փետրվարի 13/26-ի նամակը Պուրտալեսին):

⁷⁸ Ս. Ռյուֆեի և նրա միսիայի մասին մանրամասն տե՛ս Martin Bradford Gary, նշվ. աշխ., էջ 124—133:

⁷⁹ «Русское слово», 1910 г., 13 мая.

իրանում Թուրքիայի հետ համագործակցությունը Գերմանիայի առջև բաց էր անում ուղղակի փայլուն հեռանկարներ։ Այդ պատճառով գերմանական իմպերիալիզմը նպատակադրում ու հրահրում էր Օսմանյան կայսրության ագրեսիվ զավթողական քաղաքականությունն իրանում, որին նա ձեռնամուխ էր եղել 1905 թվականից և որը շարունակվեց ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմը⁸⁰։

Բաղդադի երկաթուղու հարցում 1910 թ. Գերմանիայի ակտիվ քաղաքականության պատճառները, բացի մի շարք այլ հանգամանքներից, թաքնված էին նաև նրանում, որ դեռևս 1909 թ. դեկտեմբերին Թեհրանում գերմանական դեսպանորդ Քվադթը իր կառավարությանն առաջարկեց իրանում Գերմանիայի քաղաքական գծի նոր տարբերակ։ Նրա էությունը կայանում էր նրանում, որ այդ երկրում կարևոր կոնցեսիաներ ստանալուց հրաժարվելու դիմաց Գերմանիան պետք է փոխհատուցում ստանար Ռուսաստանից այն առումով, որպեսզի վերջինս աջակցեր Գերմանիային Բաղդադի երկաթուղու շինարարության հարցում⁸¹։ Սակայն գերմանական գրոհը Ռուսաստանի, ինչպես նաև Անգլիայի նկատմամբ 1910 թ. չէր սահմանափակվում միայն Բաղդադի երկաթուղու պրոբլեմի շրջանակներում։ Այսպես, 1910 թ. մարտի սկզբին Թեհրանում հայտնվում են ինչ-որ «Միջազգային սինդիկատի» ներկայացուցիչներ, որի կազմը ռուսական միսիան այդպես էլ չկարողացավ պարզել, սակայն արտաքին գործերի մինիստրության տվյալների համաձայն նրա մեջ մտնում էին գերմանական կապիտալիստները⁸²։ Սինդիկատը շահական կառավարությանն առաջարկեց 500 հազար ֆունտ ստերլինգի չափով կանխավճար (այսինքն՝ 100 հազարով ավելի, քան տալիս էին Անգլիան և Ռուսաստանը միասին)։ Այնուհետև, իրանում սկսեցին լուրեր պտտվել այն մասին, որ իբր Գերմանիան առաջարկել է շահական կառավարությանը մի խոշոր փոխառություն⁸³։ Թեև Սեփահարը, ի պատասխան Պոկլեակի-Կոզլիի հարցման, կտրուկ կերպով ժխտեց այդ լուրը⁸⁴, սակայն Պետերբուրգի անգլիական դեսպանությունից ստացվեց մի հաղորդագրություն, որտեղ խորհրդապահորեն հայտնվում էր, որ

⁸⁰ Այդ մասին մանրամասն տե՛ս Վ. Ա. Բալբուրդյան, Թուրքիայի քաղաքականությունը իրանի նկատմամբ XX դ. սկզբին, «Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 5 (Թուրքիա), էջ 319—357։

⁸¹ GP, Bd. XXVII, t. II, № 10090.

⁸² ЦГВИА, ф. 2000, д. 1380, л. 173.

⁸³ ЦГВИА, ф. 2000, д. 3897, л. 132 և д. 3898, л. 39.

⁸⁴ Նույն տեղում, թ. 135։

Թեհրանում անգլիական դեսպանորդ Բարկլայի հետ խոսակցության ժամանակ իրանական ֆինանսների մինիստրը հաստատել է այդ փաստը⁸⁵։ Միաժամանակ ռուսական հաշվառու-վարկատու բանկի Մաշհադի բաժանմունքից հաղորդագրություն ստացվեց, որ գերմանական կապիտալիստներն աշխատում են ձեռք բերել ռուսական իմպերիալիզմի համար խոշոր ռազմաստրատեգիական և առևտրական նշանակություն ունեցող Մաշհադ—Գաուդան ճանապարհի կոնցեսիան, դրա համար առաջարկելով 2,5 միլիոն ռուբլի⁸⁶։

Մի խոսքով, արդեն բացահայտ նշաններ կային Իրանում գերմանական իմպերիալիզմի տնտեսական և քաղաքական կտրուկ ակտիվացման մասին։ Այդ առթիվ Պոկլևսկի-Կոզելլի կատարած հարցմանը Քվադթը պատասխանեց, որ իր կարծիքով ռեբրկայումս այստեղ գերմանական ձեռնբերելության համար բացվում է լայն ասպարեզ, և ինքը գրտնում է, որ Գերմանիան չպետք է Պարսկաստանում հրաժարվի իր դիրքերից բացառապես Ռուսաստանի նկատմամբ տաժաժ սենտիմենտալ բարեկամության պատճառով։ Նա պետք է կամ գործի ակտիվորեն հօգուտ առևտրի և Իրանում գերմանական ձեռնարկությունների զարգացման և կամ հրաժարվի այդ բոլորից համապատասխան փոխհատուցման դիմաց և ապա փակի իր միսիան Թեհրանում, այն փոխարինելով գլխավոր հյուպատոսությամբ։ Քվադթը հայտնեց նաև այն միտքը, որ «պետք է շտապել լուծում տալ այդ երկրներանքին, որովհետև կողմնակի ճանապարհով իրեն հասած տեղեկությունների համաձայն կանխավճարի համար Ռուսաստանի և Անգլիայի կողմից դրված պայմանները այնպիսին են, որ Պարսկաստանը շուտով բոլոր տեսակետներից կընկնի մի վիճակի մեջ, երբ նրա ձեռքերն ու ոտքերը կապված կլինեն, որի հետևանքով անուղղակի կերպով կարող է տուժել գերմանական առևտուրը»։ Պոկլևսկու այն հարցին, թե ինչպիսի փոխհատուցումներ նա ի նկատի ունի, Քվադթը ցույց տվեց իր սեղանին դրված Բաղդադի երկաթուղու մասին ռուսական և գերմանական կառավարությունների գրազրույթյան պատճենները և ափսոսանք հայտնեց, որ չգիտի, թե «կարո՞ղ է արդյոք այդ ճանապարհի շինարարության գործերի ներկա վիճակի պայմաններում նման փոխհատուցումը համարել բավարարած»⁸⁷։

Ակնարկը միանգամայն պարզ էր. Պետերբուրգից պահանջում էին վերսկսել ընդհատված բանակցությունները։ Ընդ որում գերմանական

⁸⁵ АВІР, ф. Политархия, д. 3628, л. 121.

⁸⁶ ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3898, л. 31.

⁸⁷ АВІР, ф. Персидский стол, д. 4456, л. 244

(տե՛ս Պոկլևսկի-Կոզելլի

1010 թ. փետրվարի 19-ի (մարտի 4-ի) հաղորդագրությունը Իզվեստիան)։

կողմը հասկացնում էր, որ ինքը բնավ մտադիր չէ հրաժարվել Իրանում երկաթուղային շինարարության իր ծրագրերից: Այդ կապակցությամբ ցարիզմի դրուժյունը բարդանում էր նրանով, որ 1910 թ. լրանում էր Ռուսաստանին տված շահական կառավարության պարտավորության ժամկետը՝ Իրանում երկաթուղիներ չկառուցելու վերաբերյալ: Բեռլինում ռուսական գործերի հավատարմատարի հետ զրույցի ժամանակ Շյոյնը հայտարարել էր, որ երկու պետությունների՝ Իրանում երկաթուղային մենաշնորհ ձեռք բերելու ձգտումը հակասում է բաց դռների և տնտեսական իրավահավասարության սկզբունքին, որի մասին բազմիցս հայտարարել են Անգլիան և Ռուսաստանը: Քեյսերը ներկա պահին Գերմանիան չի էլ պատրաստվում շահի տիրապետություններում ձեռնամուխ լինել երկաթուղային շինարարության, այնուամենայնիվ, դրա հնարավորությունը ապագայում չի բացառվում, հատկապես վերջին ժամանակներս Պարսկաստանի նկատմամբ գերմանական ֆինանսական շրջանների դրսևորած հետաքրքրության պատճառով⁸⁸:

Երբ այդ առթիվ Պետերբուրգում Իզվոլսկին դիտողություն արեց Պուրտալեսին, որ 1907 թ. Գերմանիան, արդեն, համաձայնվել է հրաժարվել Իրանի հյուսիսում երկաթուղային կոնցեսիաներից, դեսպանն առարկեց, ասելով, որ Գերմանիան դեռևս ոչ մի քանից չի հրաժարվել նաև ավելացրեց, որ «մեր հրաժարումը երկաթուղային կոնցեսիաներից մենք պատկերացնում ենք միայն այն դեպքում, եթե մեզ արվեն բավարար զիջումներ մյուս բնագավառներում»: Միաժամանակ Պուրտալեսը հիշեցրեց, որ Ռուսաստանը մինչև այժմ պատասխան չի տվել Գերմանիայի ներկայացրած առաջարկություններին⁸⁹: Դեսպանի այս խոսքին անմիջապես հետևեց Բեռլինի կաբինետի առաջարկությունը բանակցությունները վերսկսելու մասին: Հնդ որում Պուրտալեսը բանավոր կերպով հասկացրեց ցարական դիվանագետներին, որ Իրանում բացի ռուսական ազդեցության գոտուց գոյություն ունի նաև 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրով սահմանված ընդարձակ չեզոք գոտի, որը բաց է այլ պետությունների գործունեության համար: Այսպիսով, Գերմանիան ընդլայնում էր Իրանի նկատմամբ իր հավակնությունների շրջանակը, ձգտելով այդ երկրում ձեռք բերել այնպիսի դիրքեր, որոնք իրենց նշանակությամբ շատ քիչ էին զիջելու Անգլիայի և Ռուսաստանի

⁸⁸ GP, Bd. XXVII, t. II, 10102 (Շյոյնը՝ Պուրտալեսին, 1910 թ. մարտի 16/29),

⁸⁹ Նույն տեղում, № 10103 (Պուրտալեսը՝ Բեռլին-Հոլվեգին, 1910 թ. մարտի 18/31):

տիրապետող դիրքերին: Ճերմանական իմպերիալիզմի նպատակները, — գրում էր Օստեն-Սակենը արտաքին գործերի մինիստրի տեղակալ Սազոնովին, — պարզվում է, որ շատ ավելի էական ու կոնկրետ են, քան կարելի էր ենթադրել Պետերբուրգում կոմս Պուտալսիի և, նույնիսկ, Բեռլինում բարոն ֆոն Շյոնի արած պլատոնական հայտարարություններից»⁹⁰:

Ցարական դիվանագիտությանը մեծապես անհանգստացնում էր նաև այն, որ Ճերմանիայի իղձերը ուղղված են գլխավորապես ռուսական ազդեցության գոտու կողմը, և որ Ռեուլինի կարիքները որոշ հույսեր էր տաժում որոշակի գնով շահելու Անգլիայի, եթե ոչ համակրանքը, գեթ նրա պասսիվ վերաբերմունքը այդ իղձերի նկատմամբ»⁹¹:

1910 թ. գարնանը Իզվոլսկին գտնվում էր արտասահմանում՝ հերթական արձակուրդի մեջ: Ապրիլի 13/26-ին գերմանական արտգործմինիստրությունում հերթական դիվանագիտական ընդունելության ժամանակ ֆոն Շյոնը Բեռլինում ռուսական դեսպանության խորհրդական Շեբեկոյին ակնարկեց, որ ինքը «շատ երջանիկ» կլիներ Պետերբուրգ վերադառնալու ճանապարհին Բեռլինում հանդիպել ռուսական արտաքին գործերի մինիստրի հետ: Շեբեկոն ֆոն Շյոնի առաջարկությունն անմիջապես հաղորդեց իր ղեկավարությանը⁹²: Իր հերթին Սազոնովը նամակը շտապ ներկայացրեց Նիկոլայ II-ին, որը դրեց հետևյալ մակագրությունը. «Վատ չէր լինի, եթե Ալեքսանդր Պետրովիչը (Իզվոլսկին — Վ. Բ.) մի քանի ժամով կանգ առներ Բեռլինում»⁹³: Ապրիլի 22-ին (մայիսի 5-ին) շտապ հեռագրով Սազոնովը հրահանգեց Շեբեկոյին որևէ կերպ նախազգուշացնել Փարիզից արդեն դուրս եկած Իզվոլսկուն ցարի հայտնած ցանկության մասին⁹⁴: Այս իրադարձություններից անտեղյակ մինիստրին իջեցրին «նորդէքսպրեսից» և ուղարկեցին Շյոնի հետ հանդիպելու:

Խոսակցությունն անմիջապես ընթացավ Իրանի մասին: Գերմանական պետական քարտուղարը սկսեց Պետերբուրգի և Լոնդոնի հասցեին հանդիմանությունից, նշելով, որ իրանական հարցում Գերմանիան միշտ էլ եղել է լոյալ և չի աշխատել ստանալ ոչ մի նշանակալից կոնցեսիա: Մինչդեռ Անգլիան և Ռուսաստանը չեն ցանկանում հավատարիմ մնալ

⁹⁰ АВПР, ф. Посольство в Берлине, оп. 509в, д. 21 г., л. 113.

⁹¹ Նույն տեղում, էջ 113—114:

⁹² АВПР, ф. Посольство в Берлине, оп. 509в, д. 78, л. 78.

⁹³ АВПР, ф. Канцелярия, 1910 г., д. 19, л. 20.

⁹⁴ АВПР, ф. Посольство в Берлине, оп. 509в, д. 78, л. 81 об.

իրենց խոստմանը՝ իրանում առևտրական գործունեության համար «բաց դռներին» սկզբունքը պահպանելու հարցում: Շյոնն այնուհետև հուլյս հայտնեց, որ երկու պետությունները չեն պնդի իրանական կառավարությանը ներկայացրած իրենց պահանջները, որովհետև դրա դեմ դուրս կգա ինչպես Գերմանիայի, այնպես էլ մյուս պետությունների «հասարակական կարծիքը», իսկ «գա ոչ միայն էապես կզժվարացներ, եթե անհնարին չէր դարձնի, համաձայնության ձեռքբերումը Գերմանիայի, Անգլիայի և Ռուսաստանի միջև ասիական հարցերի վերաբերյալ, որի մեջ շահագրգռված են բոլոր մասնակիցները, այլև անբարենպաստ կերպով կազդեր նաև պետությունների միջև ընդհանուր հարաբերությունների վրա, որոնք Գերմանիան կցանկանար դարձնել ավելի բարեկամական և վստահության մբ լի»: Շյոնը չմոռացավ նաև հիշեցնել Իզվոլսկոն Պետերբուրգի կողմից ընդհատված բանակցությունների մասին:

Իր հերթին, ցարական արտաքին գործերի ղեկավարը պատճառաբանություններ էր բերում, որ ինքը տեղյակ չէ վերջին իրադարձություններին և չի կարող Շյոնին որևիցե պարզաբանում տալ, բայց և չբացըրեց, որ և՛ լոնդոնում, և՛ Պետերբուրգում անհանգստացած են իրանում Գերմանիայի ակտիվ գործունեության պատճառով: Ընդհատված բանակցությունների վերաբերյալ մինիստրը հավաստիացրեց, որ «մեծ նշանակություն է տալիս Գերմանիայի հետ համաձայնության գալու հարցին և Պետերբուրգ վերադառնալուց հետո անմիջապես կգրադվի այդ խնդրով»⁹⁵:

Քեյլինը, սակայն, չբավարարվեց այդ զրույցով: Ծրկու օր անց Քեյլման-Հոլվեգը լոնդոնի և Պետերբուրգի իր դեսպաններին ուղարկեց հեռագրեր, որոնց մեջ ցուցում էր տրվում հայտարարել երկու պետությունների մինիստրներին, որ համաձայն 1873 թ. գերմանո-իրանական պայմանագրի Գերմանիան իրանում ունի առավել բարենպաստության իրավունք և այստեղից բխող հավակնություններից պատրաստ է հրաժարվել միայն «Անգլիայի և Ռուսաստանի հետ բարեկամական պայմանագրային համաձայնության միջոցով»: Սակայն այդ համաձայնությունը կարող է բարդանալ, եթե պետությունները պնդեն ընդունելու կոնցեսիաների վերաբերյալ իրենց պահանջները⁹⁶:

Հաղորդելով կանցլերի խոսքերը Իզվոլսկոն, Պուրտալեսը ավելաց-

⁹⁵ GP, Bd. XXVII, t. II, № 10113 (Շյոնի 1910 թ. ապրիլի 24-ի (մայիսի 7-ի) Գեդեուսգեբը Վեյհելմ II-ին):

⁹⁶ GP, Bd. XXVII, t. II, № 10114 (Քեյլման-Հոլվեգը՝ Կյուլմանին 1910 թ. ապրիլի 25-ի ն (մայիսի 8-ին):

րեց, որ ցանկալի այդ համաձայնագիրը կնքվի ավելի վաղ, քան Գերմանիան ռազմարկական կարծիքի ազդեցության տակ՝ ստիպված լինի պնդելու իր իրավունքների վրա: Սակայն միևիստորը կրկին վկայակոչեց այն, որ դեռևս լրիվ չի ծանոթացել իրերի վիճակի հետ և խուսափեց որոշակի պատասխան տալուց⁹⁷:

Այնժամ Բեռլինը հրահանգ ուղարկեց անգլիական և ռուսական կառավարություններին լայնաշուրջ նախազգուշացնելու, որպեսզի նրանք Գերմանիային չդնեն կատարված փաստի առջև և դրանով իսկ չստիպեն նրան առաջադրություն կատարել իրանական կառավարության մոտ: մեղադրելով նրան առավել բարենպաստության իրավունքի խախտման մեջ⁹⁸:

Գերմանական իմպերիալիզմի ճնշումը գնալով ուժեղանում էր: Անհրաժեշտ էր ինչ-որ բան վճռել: Ռուս-գերմանական հարաբերությունների նոր սրումը, որով սպառնում էր Շյոներ Իզվոլսկու հետ խոսակցության ժամանակ, ոչ մի կերպ չէր համապատասխանում ցարիզմի շահերին: Անհրաժեշտություն զգացվեց զիջումներ անել: Պետերբուրգն ու Լոնդոնը, բանակցություններից հետո, որոշեցին հրաժարվել Իրանին ներկայացված այն պահանջից, որտեղ ասվում էր, որ վերջինս օտար-երկրացիներին չպետք է տա այնպիսի կոնցեսիաներ, որոնք կարող են խախտել Անգլիայի և Ռուսաստանի քաղաքական կամ ստրատեգիական ջահերը: Նրանք սահմանափակվում էին միայն նրանով, որ, եթե շահը ռազմապետության ճանապարհների, հեռագրական գծերի կամ նավահանգիստների վերաբերյալ որևիցե կոնցեսիա տալու ցանկություն ունենա, պետք է նախապես այդ առթիվ մտքեր փոխանակի Լոնդոնի և Պետերբուրգի հետ⁹⁹: Այս ոգով կազմված նոտան հանձնվեց Իրանին, ընդ որում դեպքանորդին հրահանգ տրվեց, որ կարիք չկա սպասելու հիշյալ նոտայի պատասխանին¹⁰⁰:

Պուրտալեսին հաղորդելով ընդունված որոշման մասին, Իզվոլսկին հույս հայտնեց, որ իրանական կառավարությանը տրված հաղորդման և՛ բովանդակությունը, և՛ ձևը առաջ չի բերի Գերմանիայի բողոքը: Զրույցի վերջում նա մեկ անգամ ևս հավաստեց Պետերբուրգի կարի-

⁹⁷ Նույն տեղում, № 10115 (Պուրտալեսը՝ Բեռլին-Հոլվեգին, 1910 թ. ապրիլի 26-ին (մայիսի 9-ին)):

⁹⁸ Նույն տեղում, № 10117 (Շյոներ՝ Մետերնիխին, 1910 թ. ապրիլի 29 (մայիսի 12)-ին, Նույնանման հեռագիր ուղարկվեց նաև Պուրտալեսին:

⁹⁹ АВГР, ф. Посольство в Берлине, оп. 509в, д. 30а, л. 51. (Իզվոլսկին՝ Օստեն-Սակենին, 1910 թ. մայիսի 0/19-ին):

¹⁰⁰ «Сборник днпл. докум.», вып. IV, стр. 188—189. (Բեռլինի Խորհրդով

նետի «համոզմունքը» իրանական գործերի վերաբերյալ «գերմանական կառավարության հետ բարեկամական համաձայնության գալու հնարավորության մասին» և իր մտադրությունը «հնարավորին չափ կարճ ժամկետի ընթացքում» վերսկսել 1907 թ. ընդհատված բանակցությունները։ Այս խոսակցության բովանդակությունը հեռագրով հաղորդվեց Օստեն-Սակենին, որպեսզի նա ևս իր հերթին դրա մասին տեղեկացնի Բեռլինի կաբինետին¹⁰¹։

Այսպիսով, ցարիզմը ստիպված էր տեղի տալ գերմանական իմպերիալիզմի ճնշմանը։ Օրակարգում գրված էր համաձայնագրի հարցը։ 1910 թ. Պետերբուրգում սկսեցին նախապատրաստություններ տեսնել հատուկ խորհրդակցություն գումարելու համար, որի ժամանակ պետք է մշակվեին այն պայմանները, որոնց դեպքում Ռուսաստանը կարող էր համաձայնվել բավարարելու գերմանական պահանջները։ Դատելով Շյոնի և Պուրտալեսի հայտարարություններից դրանք հիմնականում հանգում էին հետևյալին. 1. Ռուսաստանը պարտավորվելու էր կառուցել Թեհրան—Խանեկին երկաթուղին, թեկուզև գերմանական կապիտալների մինիմալ մասնակցությամբ և 2. Իրանում գերմանական առևտրին պետք է տար լրիվ ազատություն։

Այդ խորհրդակցության առթիվ հանգամանալից տեղեկանքում, որը կազմված էր ցարական մինիստրությունում, խոստովանվում էր, որ «Գերմանիան ըստ երևույթին վճռական ձևով մտադիր է այսպես թե այնպես մեզ հետ որոշակի համաձայնության գալ նշված երկու կետերի առթիվ, և եթե մենք ցանկանում ենք մեզ համար ապագայում ապահովել գործողությունների ազատություն հյուսիսային Պարսկաստանում, և դադարեցնել Թեհրանում մեր դեմ ուղղված դավերը, մենք այլ ելք չունենք, քան համաձայնության մեջ մտնել Բեռլինի կաբինետի հետ մեզ համար հնարավորին չափ ձեռնտու պայմաններով»¹⁰²։

Իսկ Բեռլինում, ստանալով հաղորդագրություն իզվոլսկու խոստման մասին՝ «կարճատև ժամկետում» վերադառնալ ընդհատված բա-

շահական կառավարությունն, այնուամենայնիվ, ուղարկեց պատասխան նոտա, որովհետև լուռությունը կարող էր ընկալվել որպես համաձայնություն, սակայն ստացված հրահանգի համաձայն ո՛չ ուղևորական և ո՛չ էլ անգլիական դեսպանորդները այն չընդունեցին։ (Տե՛ս Շտեմբլի 1910 թ. հունիսի 8/21-ի ղեկուցադիրը՝ GP, Bd. XXVII, t. II, № 10131 և Պոկլեպի-Կոդեյլի 1910 թ. օգոստոսի 24-ի (սեպտեմբերի 6-ի) հեռագիրը՝ «Сборник дипл. докум.», вып. V, стр. 86)։

¹⁰¹ АВПР, ф. Посольство в Берлине, оп. 509в, д. 30а, л. 51.

¹⁰² ЦГВИА, ф. 2000, д. 1380, л. 175 (հարգործմինիստրություն 1010 թ. մայիսի 12/28-ի տեղեկանքը)։

նակցություններին, որոշեցին միառժամանակ ձեռնպահ մնալ հետագա առաջադրություններից և սպասել մյուս կողմի առաջարկություններին¹⁰³:

Այդ որոշումը, Բետման-Հոլվեգի խոստովանությամբ, նշանակալից չափով բացատրվում էր նաև նրանով, որ գերմանական ֆինանսիստները «դեռևս հակում չունեին» ստանալու կոնցեսիաներ, որոնց մասին հիշատակվում էր անգլո-ռուսական նոտայում¹⁰⁴: «Դրոյն օրիններանկը» կտրուկ կերպով հրաժարվեց Գլինների կողմից ստացված բանկային կոնցեսիայի օգտագործումից¹⁰⁵, և նրա ներկայացուցիչը, որը (Շյունեմանի խնդրանքով) մեկնել էր Թավրիզ՝ այդ քաղաքում բանկի բաժանմունք կազմակերպելու պայմանները պարզելու համար, Իրանը համեմատեց քամված լիմոնի հետ, որից այլևս ոչինչ չես քամի¹⁰⁶: «Դրոյն օրիններանկը» Ռյուֆին ուղարկեց հետազոտելու իրանական պայմանները միայն արագործմանխատրության ճնշման տակ¹⁰⁷: Ֆինանսական տեսակետից Իրանը հատուկ հետաքրքրություն չէր ներկայացնում գերմանական կապիտալիստների համար, որոնք արդեն մինչև կոկորդը զբաղված էին Մերձավոր արևելքի ձեռնարկություններով: Միջին արևելքում գերմանական էքսպանսիայի նախաձեռնողն ու առաջ մզողը Բեռլինի կաբինետն էր, որը դա դիտում էր որպես գերմանական իմպերիալիզմի ընդհանուր հարձակման օղակներից մեկը՝ «արևի տակ տեղ ունենալու» պայքարում:

Այսպիսով, ստիպելով Պետերբուրգի կաբինետին համաձայնվել բանակցությունների վերսկսմանը, Բեռլինը գերադասեց հետագա նախաձեռնությունը տրամադրել ռուսներին: Իզվոլսկուն ուղղված Օստեն-Սակենի հեռագրում հայտնվում էր, որ ռեալոն Շյունը անհամբերությամբ սպասում է 1907 թ. բանակցությունների վերսկսմանը և ձերդ գերազանցության կողմից խոստացված առաջարկություններին¹⁰⁸:

Սակայն անգլիական գործերի հավատարմատարի հետ զրույցի ժամանակ, Շյունը անզուգուշյուն ունեցավ ասելու, որ Իզվոլսկու հետ զրույցից և Իրանին ներկայացված անգլո-ռուսական նոտայի նոր խըմբագրության մասին հաղորդումից հետո, իրանական հարցը «կորցրեց

¹⁰³ GP, XXVII /II, № 10130 (Բետման-Հոլվեգը՝ Զիբշկուն, 1910 թ. մայիսի 20-ին (հունիսի 2-ին)).

¹⁰⁴ Նույն տեղում:

¹⁰⁵ M. Bradford Gary, №24. աշխ., էջ 124.

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 135:

¹⁰⁷ Նույն տեղում:

¹⁰⁸ АВПР, ф. Посольство в Берлине, оп. 509в, д. 30а, л. 55 об. (Օստեն-Սակենը՝ Իզվոլսկուն, 1910 թ. մայիսի 7/20-ին).

իր սրությունը» և որ ինքը ցուցում է տվել Մետտերնիխին այլևս այն շշուղամբի¹⁰⁹։ Շյունի խոսքերը անմիջապես հաղորդվեցին Պետերբուրգ¹¹⁰։ որանդ ուշադրություն դարձրին, որ Պուրտալեսը ևս վերջին ժամանակներում չէր վերադառնում իրանական հարցին, «իսկ ընդհանուր խոսակցությունների ժամանակ դրսևորում էր ավելի փափկություն»¹¹¹ և բանակցությունների վերականգնման միտքը կրկին հետաձգեցին։ Յարական դիվանագետները հասկանում էին, որ բանակցությունների ժամանակ իրենք ստիպված կլինեն զիջումներ անել և աշխատում էին հնարավորին չափ հետաձգել այդ պահը։

Սակայն հարցը երկար ժամանակ հետաձգել չհաջողվեց։ 1910 թ. հունիսի կեսին Շյունը Փարիզում դեսպան նշանակվեց և արտաքին գործերի պետական քարտուղարի պաշտոնը զբաղեցրեց Կիդերլեն-Վեխտերը։ «Ես այժմ, թեև դեռ չեմ կարող արտահայտվել նոր պետական քարտուղարի ապագա գործունեության ուղղության մասին,—գրում էր Օստեն-Սակենը,—սակայն միայն կանխատեսում եմ, որ ֆոն Կիդերլեն-Վեխտերի հայտնվելը կայսերական ղեկարարամենտի ղեկավարի դերում ավելի շուտ կարող է ուժեղացնել, քան թուլացնել գերմանական քաղաքականության ձգտումը Արևելքում նրա կողմից նշված խնդիրների նրկատմամբ»¹¹²։ Դեսպանի անհանգստությունը շուտով սկսեց հաստատվել։ Արդեն օգոստոսի սկզբին նա արտգործմինիստրություն հաղորդեց գերմանական արտաքին գործերի ղեկարարամենտում Ռուսաստանի նկատմամբ տրամադրությունների ակնառու փոփոխության և իրանական հարցում Գերմանիայի ակտիվացման մասին¹¹³։ Մի քանի օր հետո դա հաստատվեց Սազոնովի հետ Պուրտալեսի զրույցի ժամանակ։ «Մեկ-ժամյա բուռն, սակայն միանգամայն բարեկամական հակաճառումներից հետո,—գրում էր արտաքին գործերի մինիստրի տեղակալը Իզվոլսկուն,—Պուրտալեսը ինձ արեց հետևյալ հայտարարությունը, որի հաղորդումը և հանդիսանում է իմ այս նամակի նպատակը. Ռուսաստանի և Գերմանիայի միջև ներկայիս խրոնիկական թյուրիմացությունների

¹⁰⁹ BD, vol. VI № 371. (Գե Սալիշը՝ Գրեյին, 1910 թ. մայիսի 11 /24-ին)։

¹¹⁰ АВПР, ф. Посольство в Берлине, оп. 509в, д. 78, л. 100 об. (Իզվոլսկին՝ Օստեն Սակենին, 1910 թ. մայիսի 13 /26-ին)։

¹¹¹ Նույն տեղում։

¹¹² АВПР, ф. Канцелярия, 1910 г., д. 18, л. 209 (Օստեն-Սակենը՝ Իզվոլսկուն, 1910 թ. հունիսի 10/29-ին)։

¹¹³ АВПР, ф. Канцелярия, 1910 г., д. 204, л. 2—4 (Օստեն-Սակենը՝ Սազոնովին, 1910 թ. օգոստոսի 6/19-ին)։

պատճառով¹¹⁴ անհրաժեշտ է, որպեսզի վերջինս մեզանից ստանա բարեկամական դիրքավորման ապացույցներ՝ Բաղդադի գծի հետ խանհկինում ապագա պարսկական ճանապարհների միացման վերաբերյալ համաձայնագրի ձևով: Այդպիսի համաձայնագիրը, կոմս Պուրտալիսի արտահայտությամբ, գերմանական կառավարության և հասարակական կարծիքի կողմից կընդունվեր երախտագիտությամբ և վերջ կդնեք մեր միջև ամեն տեսակի թյուրիմացություններին»¹¹⁵:

Ջրույցի ժամանակ Սազոնովը հարցնում է Պուրտալիսին, արդյոք իրականում գերմանական առևտուրը Իրանում այդքան նշանակալից է, որ Գերմանիան շահագրգռված է հնարավորին շափ համաձայնագիրը շուտ կնքել: Իրան, նա ստացավ հետևյալ պատասխանը, որ այդ առևտուրը այնքան էլ քիչ չէ, «որքան, ըստ երևույթին, մտածում է պարոն Սազոնովը» և որ բացի այդ «Գերմանիան նկատի ունի նաև ապագա հեռանկարները»:

Իրանից հետո Սազոնովը հավաստիացրեց դեսպանին, որ բանակցությունները վերսկսելու վերաբերյալ Պետերբուրգի կարինետի մտադրությունը չի փոխվել, սկզբունքորեն արդեն վճռված է անել հանդիպակաց առաջարկություններ և հնարավոր է, որ Իզվոլսկին կքննարկի իրանական հարցը Վիլհելմ II-ի հետ Նիկոլայ II-ի առաջիկա հանդիպման ժամանակ: «Սակայն չի կարելի թերազնահատել այն դժվարությունները, որոնք կանգնած են գերմանական ցանկությունները բավարարելու ճանապարհին: Դա մեծ աղմուկ առաջ կբերի հատկապես առևտրական շրջաններում, որոնք վախենում են գերմանական մրցակցությունից: Սակայն վերջ ի վերջո ավելի լավ է կռվել շաքարի գլխիկներով, քան արկերով»,—վերջացնում է իր խոսքը ցարական արտաքին գործերի մինիստրի տեղակալը¹¹⁶:

1910 թ. հոկտեմբերի 15/28-ին Պետերբուրգում դումարվեց հատուկ խորհրդակցություն՝ քննելու համար Գերմանիայի հետ հնարավոր համաձայնագրի սկզբունքները: Նախապես կազմվեց համաձայնագրի

¹¹⁴ Այստեղ խոսքը այն մասին է, որ «Новое время» թերթը հարձակումներ էր կազմակերպում Թեհրանում Բվադթի գործունեության նկատմամբ, ինչպես նաև մի շարք այլ հարցեր, որոնք և պատրվակ հանդիսացան վերևում հիշատակված գրույցի համար: (Տե՛ս GP, XXVII/ II, № 9950 (Պոսագովսկի-Վեների 1910 թ. հուլիսի 30 (օգոստոսի 12-ի հազարգազրույթունը)):

¹¹⁵ АВПР, ф. Канцелярия, 1910 г., д. 97, л. 78 (Սազոնովը՝ Իզվոլսկու, 1910 թ. օգոստոսի 12/26-ին):

¹¹⁶ GP, Bd. XVII, t. II, № 10137.

նախագծի նոր տարբերակ, որն ուղարկվեց խորհրդակցության բոլոր մասնակիցներին:

Այսպիսով տատանումների շրջանն ավարտվեց: Պետերբուրգում սկսեցին լրջորեն զբաղվել Գերմանիայի հետ բանակցությունների նախապատրաստմանը:

Նոր մշակված նախագծում իրանական երկաթուղիների հարցում ցարիզմը գնում էր ավելի մեծ զիջումների, քան 1907 թվականին¹¹⁷:

Հոկտեմբերի 15/28-ի հատուկ խորհրդակցությունում կրկին առավել ուժեղ առարկություններ առաջ բերեց համաձայնագրի երկրորդ հոդվածը: Քիչ չէին նաև տագնապով լի այն ցուցումները, որ Իրանում ուսական առևտրին սպառնում է մեծագույն վտանգ:

Թեև խորհրդակցության մասնակիցները, այնուամենայնիվ, ստիպված էին գալ այն եզրակացության, որ Քեհրան—Խանեկին գծից հրաժարվելը, ամենայն հավանականությամբ, ավելի վնասակար կլիներ, քան նրա շինարարության մեջ մեր իրավունքի ապահովումը, քանի որ գերմանացիները իրենք կարող էին իրականացնել «այդ գծի կառուցումը և այն պահել իրենց տրամադրության տակ՝ այդպիսի վիճակի բոլոր առավելություններով հանդերձ»: Վերջին հաշվով վճռվեց, որ բանակցությունները Բեռլինում պետք է կրեն «շատ ընդհանուր բնույթ» և տվյալ պահին բոլորովին հարկ չկա «կապել մեղ ոչ մի որոշակի խոստումով»¹¹⁸:

Այսպիսով, Սազոնովի վիճակն ուղղակի աննախանձելի էր¹¹⁹, որովհետև և հատուկ խորհրդակցության ժամանակ, Ռուսաստանի կողմից հնարավոր զիջումների հարցում, այդպես էլ վերջնական որոշման չեկան: Մինչդեռ Պետերբուրգում գերմանական դեսպանի հետ զրույցներից ապագա մինիստրը գիտեր, որ Պոտսդամում բանակցությունների զլխավոր և հանգուցային հարցը լինելու է իրանական պրոբլեմը¹²⁰: Գեր-

¹¹⁷ СЗУ ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1380, л. 178, 183 (Գերմանիայի հետ համաձայնագրի նոր նախագիծը), «Красный архив», 1933, т. 3 (58), стр. 55 (1910 թ. հոկտեմբերի 15 /28-ի հատուկ խորհրդակցության մատյանը):

¹¹⁸ «Красный архив», 1933, т. 3 (58), стр. 55—57 (խորհրդակցության սկզբում Սազոնովը հայտարարեց, որ ինքը մտադիր չէ մշակված նախագիծը հանձնել ձեռնարկության տեսքով, սակայն մտածում է բանակցությունների ժամանակ զեկավարվել նրանով):

¹¹⁹ Պոտսդամում բանակցություններ վարելու պարտականությունը ցարական կառավարությունը դրել էր Սազոնովի վրա:

¹²⁰ S. D. Sazonov, *Fateful Years 1909—1916*, London, 1928, p. 37.

մանական ղեկավարների հետ հենց առաջին հանդիպումները¹²¹ հաստատեցին այդ: «Ես նկատեցի,—հետագայում գրում էր Սազոնովը,—որ նրանք պարսակական հարցին տալիս են արտակարգ նշանակություն և ամբողջ ուժով պետք է ձգտեն նրա բարենպաստ լուծմանը»¹²²: Սակայն դեռևս Գերմանիա մեկնելուց առաջ պարզվեց, որ գերմանացիներն ունեն ավելի լուրջ նպատակներ, քան իրանական հարցը: Նրանք որոշել էին լուրջ փորձ կատարել Անտանտը պառակտելու ուղղությամբ և այդ նպատակով մտադիր էին առաջարկել կնքելու ընդհանուր քաղաքական դաշինք Ռուսաստանի և Գերմանիայի միջև: 1910 թ. նոյեմբերի 2/15-ին Բեռլին-Հոլվեգը Պորտալիսին ուղարկեց ռուս-գերմանական համաձայնագրի նոր նախագիծ, որի առաջին հինգ կետերն էին կազմում ընդհանուր քաղաքական դաշինք կնքելու պայմանները: Մասնավորապես, այնտեղ նշվում էր, որ Գերմանիան իր վրա պարտավորություն կվերցնի չխրախուսել Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի և Բալկանյան պետությունների ագրեսիվ քաղաքականությունը, եթե Ռուսաստանը իր վրա պարտավորություն վերցնի չաջակցելու Անգլիայի նույնպիսի քաղաքականությանը¹²³:

Պատահական չէ, որ անգլիական դիվանագիտությունը, որը գաղտնի ճանապարհով տեղեկացել էր գերմանական այս առաջարկության մասին, ուղղակի խուճապի մեջ էր: Այդ պատճառով Պոտսդամում ռուս-գերմանական բանակցությունների ժամանակ անգլիացիները մշտապես ճնշում էին գործադրում ռուսական պատգամավորության վրա, որպեսզի վերջինս միշտ հիշի, որ «կա մի կետ, որից այն կողմ ռուսական կառավարությունը չի կարող անցնել, հակառակ դեպքում Գերմանիային կըհաջողվի լուրջ պառակտում մտցնել համաձայնության երկրների մեջ»¹²⁴:

1910 թ. նոյեմբերին Պոտսդամում նիկոլայ II-ի և վիլհելմ II-ի հանդիպման ժամանակ գերմանական կողմը կրկին առաջ քաշեց ռուս-գերմանական դաշինքի հարցը, սակայն կրկին անգամ հանդիպեց ռուսական դիվանագետների անորոշ և մանվածապատ պատասխաններին, որոնք գերմանացիների կողմից ընկալվեցին որպես մերժում: Այդ պատ-

¹²¹ Հոկտեմբերի 17/30-ին արտաքին գործերի մինիստրության առաջին դեպարտամենտի փոխնախագահ Վ. Օ. Կլեմմի և արտգործմինիստրության զբաղեցնակի տեսրեն Ա. Վ. Սավինսկու ուղեկցությամբ Սազոնովը մեկնեց Գերմանիա:

¹²² S. D. Sazonov, նշվ. աշխ., էջ 38,

¹²³ S. D. GP, Bd. XXVII, t. II, № 10159, Anlage I, s. 847f (նախագիծ այս մասը հրապարակված է նաև «Красный архив», 1923, т. 3, стр. 9—10).

¹²⁴ Джордж Бьюкенен, Моя миссия в России. Воспоминания дипломата, том I, Берлин, 1924, стр. 75.

ճառով բանակցությունների բովանդակությունը կրկին հանգեց իրանական հարցին և Բաղդադի ճանապարհին:

Բանակցություններ վարելու ընթացքում, ըստ էության, զուրկ լինելով ամեն տեսակի լիազորություններից, Սազոնովը ստիպված էր սահմանափակվել համաձայնագրի ընդհանուր սկզբունքների քննարկումով, խուսափելով որևէ կոնկրետ պարտավորություններից: Այդ պատճառով Պոտսդամում իրանական հարցը քննարկվեց միայն «ամենաընդհանուր գծերով»¹²⁵:

Քանի որ բանակցությունների արդյունքի գրավոր որոշում տեղի չունեցավ, կողմերը միայն պայմանավորվեցին հետևյալի մասին. Ռուսաստանը սկզբունքային համաձայնություն տվեց կառուցելու Թեհրան—Խանեկին գիծը, պայմանով, որ Գերմանիան հրաժարվի իրանի ռուսական գոտում քաղաքական բնույթի կոնցեսիաներ ձեռք բերելուց:

Այսպիսով, համաձայնագրի մասին հարցի վերջնական լուծման համար անհրաժեշտ էր դեռևս քննարկել բազմաթիվ էական հարցեր, ինչպես, օրինակ, ինչպիսի կոնցեսիաներ պետք է համարվեին քաղաքական, Թեհրան—Խանեկին գծի շինարարության ճշգրիտ ժամկետներն ու պայմանները և այլն:

Այդ հարցերի վերաբերյալ բանակցությունները պետք է շարունակվեին Պետերբուրգում Սազոնովի և Պուրտալեսի միջև: Սակայն Պետերբուրգի բանակցությունները դրսևորեցին կողմերի խորը տարակարծությունը վերոհիշյալ երկու առանցքային հարցերի վերաբերյալ: Այդ պատճառով փաստորեն ռուս-գերմանական բանակցությունները դադարեցին: Գերմանական փաստաթղթերում ոչ մի խոսք չի ասվում Բեռլինի կողմից բանակցությունների դադարեցման պատճառների մասին, որոնց վրա նա այնքան պնդում էր: Ամենայն հավանականությամբ այնտեղ գտնում էին, որ արդեն շտապելու անհրաժեշտություն չկա և ավելի նպատակահարմար է սպասել Գերմանիայի համար առավել ձեռնտու իրավիճակի: Իսկապես, Բեռլինի կողմից բանակցությունները վերսկսվեցին միայն այն ժամանակ, երբ հնարավոր եղավ դրանք օգտագործել Գերմանիայի համար այլ, առավել կարևոր հարցում՝ մարոկկոյական հարցում: 1911 թ. մարտին դրությունը Մարոկկոյում հասել էր խիստ մեծ լարվածության: Այդ պայմաններում Ռուսաստանի դիրքը Բեռլինի կաբինետի համար ձեռք էր բերում հատկապես կարևոր նշանակություն, իսկ բանակցությունները հարմար միջոց էին Պետերբուրգի վրա ճնշում

¹²⁵ «Красный архив», 1923, т. 3, стр. 7 (Տե՛ս Սազոնովի 1910 թ. նոյեմբերի 4/17-ի ղեկուցադրել):

գործադրելու համար, շխոսելով արդեն այն մասին, որ համաձայնագրի կնքումը Ֆրանսիայի դաշնակցի հետ ֆրանս-գերմանական հարաբերությունների սրման շրջանում Փարիզի վրա պետք է ունենար բարոյալքող ներգործություն:

Եվ Բեռլինը սկսում է աստիճանաբար հող նախապատրաստել, որպեսզի իր համար ապահովի Ռուսաստանի աջակցությունը կամ թեկուզ չեզոք դիրքը նոր՝ մարոկկոյական ճգնաժամի դեպքում: Այդ պատճառով 1911 թ. ապրիլի սկզբին գերմանական արտգործմինիստրության քաղաքական բաժնի ղեկավար Ցիմմերմանը հայտարարեց Բեռլինում ռուսական գործերի հավատարմատարին, որ Բեռլինի կաբինետը Իրանի վերաբերյալ բանակցությունները համարում է ռաբեհաշող կերպով ավարտված» և «միակ պատճառը, որը ստիպեց գերմանական կառավարությանը ուշացնել այդ հարցի ավարտումը», հանդիսանում է Սազունովի հիվանդությունը: Այնուհետև նույն այդ հայտարարության մեջ Ցիմմերմանը, Շերեկոյի համար միանգամայն անսպասելի կերպով, անցնում է մարոկկոյական հարցին, հայտարարելով, որ «Գերմանիան չի տվել և չէր ցանկանա տալ իր համաձայնությունը Ֆրանսիայի զինված միջամտությանը, որը դուրս է գալիս ալխեսիրասյան ակտի սահմաններից»¹²⁶:

Քանի որ Մարոկկոյում իրադարձությունները զնալով զարգանում էին, Բեռլինը անցնում է ավելի կոնկրետ գործողությունների: Ապրիլի 13/30-ին Բեռլին-Հոլվեգը Պուրտալեսին է ուղարկում ռուս-գերմանական համաձայնագրի նոր նախագիծ, որտեղ Պոտսդամում ներկայացված պահանջների համեմատ պարունակվում էին որոշ զիջումներ: Մասնավորապես գերմանացիները համաձայնվում էին, որպեսզի հանեկին—Թեհրան երկաթուղու շինարարությունը սկսվի Սադիշե—հանեկին գծի ավարտից հետո ռոշ ուշ, քան երկու տարվա ընթացքում»:

Այնուհետև նշվում էր, որ գերմանական կառավարությունը պարտավորվում է առանց Պետերբուրգի հետ նախնական համաձայնության, ո՛չ իր և ո՛չ էլ գերմանական կամ օտարերկրյա հպատակների համար ձեռք չբերել Բաղդադի երկաթուղու ճյուղավորումներ՝ հանեկինից հյուսիս ընկած ռուսական գոտում¹²⁷:

Ռուսական նախագծի տեքստում Բեռլինի կողմից կատարված մյուս

¹²⁶ АВПР, ф. Персидский стол, д. 4457, л. 286а—286б (Շերեկոյի 1911 թ. ապրիլի 8/18-ի հաղորդագրությունը ներառովին):

¹²⁷ GP, Bd. XXVII, t. II, № 10124, 10152—10155.

փոփոխություններին¹²⁸։ Հարկ է նշել պրեամբուլայի մեջ երկու պետութ-
յունների պարտավորության մտցնումը Իրանի տերիտորիալ ամբողջա-
կանությունը և անկախությունը հարգելու վերաբերյալ։ Այս կետն, ան-
շուշտ, նպատակ ունի ստիպելու Ռուսաստանին, թեկուզև անուղղակի
կերպով, ճանաչել Գերմանիայի քաղաքական շահերն ու իրավունքներն
իրանում։ Դա գերմանական կառավարությանը տալու էր ձայնի իրա-
վունք Իրանի քաղաքական գործերում և այդ երկրի հետ Ռուսաստանի
հարաբերություններին միջամտելու հնարավորությունն այն պատրվակով,
որ Ռուսաստանի այս կամ այն քայլը կարող է ազդել Իրանի ամբողջա-
կանության կամ անկախության վրա։

Սակայն շնայած դրան, 1911 թ. օգոստոսի 6/19-ին Պետերբուր-
գում ստորագրվեց ռուս-գերմանական համաձայնագրի վերջնական
տեքստը¹²⁹։

Պետերբուրգի համաձայնագրի ստորագրումը կարելի է դիտել որ-
պես առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին իմպերիա-
լիստական Գերմանիայի դիվանագիտության ակնառու նվաճումներից
մեկը։ Գերմանիային հաջողվեց ոչ միայն հասնել Ռուսաստանի հրա-
ժարմանը Բաղդադի երկաթուղուն դիմադրություն ցույց տալուց, այլև
ամրապնդվել Իրանում։ Թեհրան—Խանեկին գծի կառուցման որոշակի,
թեև և հեռավոր ժամկետի սահմանումը նրան հույս էր ներշնչում ապա-
գայում գերմանական ապրանքների համար նվաճելու իրանական շու-
կան։ Դա հատկապես ունի հեռանկարներ էր ձեռք բերում նրանով, որ
համաձայնագրի վերջնական տեքստի մեջ Բեռլինի պնդմամբ մտցվեց
մի վերապահում, որը խանեկինյան ճանապարհի կոնցեսիայից ցարա-
կան կառավարության հրաժարման դեպքում ապահովում էր Գերմա-
նիայի իրավունքը՝ իրանական կառավարությունից իր համար ձեռք բե-
րելու այդ կոնցեսիան¹³⁰։ Այդ վերապահումը փաստորեն ճեղքվածք էր
բաց անում Ռուսաստանի գլխավոր պահանջի մեջ, որպեսզի հյուսիսա-
յին Իրանում Գերմանիան չփորձեր ձեռք բերել երկաթուղային, ճանա-
պարհային և այլ կոնցեսիաներ։ Եվ դատելով նիկոլայ II-ին ուղղված

¹²⁸ Գերմանական նախագծի հիմքում գրված էր ռուսականի տեքստը, որտեղ Բեռ-
լինը մտցրել էր իր փոփոխությունները (Sén GP, Bd. XXVII, t. II, № 10214, Anlage)։

¹²⁹ Այդ համաձայնագիրը հայտնի է նաև Պոստոլովյան անունով, որովհետև նրա
պայմանները քննարկվել էին հիշյալ վայրում ևս։

¹³⁰ Ռուս-գերմանական համաձայնագրի տեքստը տե՛ս Международные отноше-
ния в эпоху империализма. Документы из архивов царского и временного пра-
вительства (1878—1917), серия II, 1900—1913, т. XVIII, ч. 1, 1938, стр. 353—354.

Ներատուվի զեկուցագրից, Պետերբուրգում արդեն այն աստիճանի հաշտեցման էին այն մտքի հետ, որ ցարիզմին ոչ միայն չի հաջողվի մենակ իրագործել Թեհրան—Խանեկին գիծը, այլև նույնիսկ օտարերկրյա կապիտալների օգնությամբ, «որոնք անկասկած մեզանից կպահանջեն երաշխիքներ» և որ «վերջ ի վերջո այդ գիծը կկառուցվի գերմանացիների կողմից», որ նույնիսկ համաձայնագրի տեքստի մեջ մտցրին մի պայման, ըստ որի «պայմանավորվող կողմերը» պարտավորվում էին մեկը մյուսին թույլատրել մասնակցելու այն բոլոր արտոնություններին, «որոնք նրանցից մեկը կարող էր ստանալ այդ գծի վերաբերյալ»¹³¹։

Բաղդադի երկաթուղու շինարարությանը Ռուսաստանի դիմադրության դադարեցումով Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միասնական գործողությունների ճակատը ճեղքվեց և պատահական չէ, որ հետագա երեք տարիների ընթացքում Գերմանիան աշխատում էր այդ երկաթուղու վերաբերյալ անշատ պայմանագրեր կնքել նաև Ֆրանսիայի (1914 թ. փետրվար) և Անգլիայի (1914 թ. հունիս) հետ։ Առհասարակ պետք է նշել, որ Պետերբուրգի համաձայնագիրը «Ծույակ դաշինքի» և «Ծույակ համաձայնության» պետությունների միջև ներքին դաշնակցային կարգապահության խախտման առավել բնորոշ օրինակներից մեկն էր։

Ռուսաստանը նաև խոշոր զիջում էր անում Գերմանիային, պաշտոնապես ճանաչելով իրանում «րաց դոների» սկզբունքը և Գերմանիայի առջև լայնորեն բաց էր անում հյուսիսային իրանի դոները։

Ամբողջությամբ վերցրած, Պոտսդամի համաձայնագիրը իրենից ներկայացնում է ցարական Ռուսաստանի նահանջը գերմանական իմպերիալիզմի առջև։ Միաժամանակ այն հանդիսանում է «հին» կապիտալիստական պետությունների դիրքերի դեմ գերմանական իմպերիալիզմի հարձակման ցայտուն դրսևորումներից մեկը, որը խիստ բնորոշ է XX դ. սկզբի Գերմանիայի արտաքին քաղաքականության համար։

Պոտսդամի համաձայնագիրը պատերազմից առաջ Գերմանիայի վերջին փորձն է իր հակառակորդների՝ Անտանտի երկրների, բլոկը պառակտելու ուղղությամբ։ Սակայն ո՛չ անգլո-ռուսական և հատկապես ֆրանս-ռուսական հրաբուխությունների սրումը համաձայնագրի կնքումից հետո, ո՛չ Ռուսաստանի կողմից գրաված հաշտարարական դիրքը մարոկկոյական ճգնաժամում, չհանգեցրին Անտանտի խորտակմանը։ Ընդհակառակը, Գերմանիայի հետ ընդհանուր քաղաքական դաշինք կնքե-

¹³¹ Նույն տեղում։ (Տե՛ս համաձայնագրի վերաբերյալ Կլեմմի բացատրագիրը)։

լու հարցի քննարկման ժամանակը Պետերբուրգի համար դարձավ բեկումնային՝ նրա կողմից տարվող խոսանակելու քաղաքականության մեջ, և այդ ժամանակվանից ցարական կառավարությունը ավելի վճռականորեն կանգնեց Անտանտի ամրապնդման կուրսի վրա, որպես իր արտաքին քաղաքականության հիմնական հենարանի:

В. А. БАЙБУРТЯН

ИРАНСКИЙ ВОПРОС В РУССКО-ГЕРМАНСКИХ ДИПЛОМАТИЧЕСКИХ ОТНОШЕНИЯХ В 1905—1911 гг.

Резюме

В статье освещается история острой дипломатической борьбы, которая разгорелась между империалистическими державами вокруг иранского вопроса, достигшего своего апогея накануне первой мировой войны.

На фоне межимпериалистических противоречий на Ближнем и Среднем Востоке показывается дипломатическая борьба между царской Россией и кайзеровской Германией вокруг Багдадской железной дороги и отражение этой борьбы на взаимоотношения держав внутри Тройственного согласия.

В частности показывается, что «иранский вопрос», который неразрывно был связан с «восточным вопросом», имел определенное значение в ускорении вооруженного конфликта между противоборствующими империалистическими военно-политическими блоками—Антанты и Тройственного союза.